ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ
ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ
ՀԱՍՑԵ՝ ք. ԿԱՊԱՆ, ՇԱՀՈՒՄՅԱՆ 20/32:
ՀԵՌԱԽՈՍ՝ (0285) 5 25 63 • (091) 45 90 47 • (077) 06 28 02
Գրանցման վկայականը՝ 01Մ 000231: Տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2: Ծավալը՝ 2 տպագրական մամուլ: Տպաքանակը՝ 2000:
ISSN 1829-3468

# Սյունյաց երկիր

ՏԱՍՆՕՐՅԱ ԹԵՐԹ
Գինը՝ 100 դրամ:
ՇԱԲԱԹ
8 ՀՈՒՆԻՍԻ 2013Թ. • № 15 (288)
www.syuniacyerkir.am

Օ պէ՛մպորա,
օ մո՛ռես,
Օ Զանգեզուր, օ
Գո՛րիս...
ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ

# Ողբերգություն Գորիսում

## ԱՌԱՆՑ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ

**Հունիսի 4-ին Գորիսը հրաժեշտ տվեց Ավետիք Բուդաղյանին, ով մահացել էր հունիսի 1-ին, ժամը 23.30-ի սահմաններում տեղի ունեցած կրակոցներից ստացած հրազենային վնասվածքից: Տեղի ունեցածի վերաբերյալ շրջանառվող վարկածներից հիշենք ոստիկանության առաջին պաշտոնական տեղեկատվությունը. «Հունիսի 1-ին՝ ժամը 23.40-ին, անհայտ քաղաքացուց ոստիկանության Գորիսի բաժնում ահազանգ է ստացվել, որ Գետափնյա թաղամասից լսվել են կրակոցներ: Մեկնած օպերատիվ խումբը պարզել է, որ հունիսի 1-ին՝ երեկոյան, Դավիթ-Բեկի փողոցի թիվ 1 հասցեում գտնվող առանձնատան դիմացի հատվածում տեղի են ունեցել կրակոցներ, ինչի արդյունքում 1970թ. ծնված Ավետիք Բուդաղյանը ստացած հրազենային վնասվածքներից տեղում մահացել է, իսկ 1971թ. ծնված Արտակ Բուդաղյանը եւ 1975թ. ծնված Նիկոլայ Աբրահամյանը հրազենային վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց: Դեպքի վայր են մեկնել ՀՀ ոստիկանության պետի տեղակալ Հ.Հունանյանը, քրեական հետախուզության գլխավոր վարչության պետ Ա.Զաքարյանը եւ Սյունիքի մարզային վարչության պետ Վ.Ավագյանը: Փաստի առթիվ հունիսի 2-ին ոստիկանության Գորիսի քննչական բաժանմունքում ՀՀ քրեական օրենսգրքի 104 հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով (սպանություն) եւ 235 հոդվածի 1-ին մասով (ապօրինի զենք, զինամթերք կրելը, պահելը, օգտագործելը) հատկանիշներով հարուցվել է քրեական գործ: Ոստիկանություն են բերման ենթարկվել եւ հրավիրվել դեպքին մասնակից, ականատես հնարավոր վկաները, ովքեր հարցաքննվում են: Կան ձերբակալվածներ: Կատարվում է նախաքննություն»: Նշվում է նաեւ, որ դեպքը տեղի է ունեցել Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանի առանձնատան դիմաց, իսկ կրակոցները հնչել են «Բերետա» տեսակի եւ որսորդական հրացաններից:**


Ավետիք Բուդաղյան

■ 1970թ. ծնված Ավետիք Բուդաղյանն աշխատում էր «Վարարակն» ՓԲԸ տնօրեն: Դեռեւս 2003թ. նա մասնակցեց Գորիսի քաղաքապետի ընտրություններին եւ ստացավ մոտ 2000 ձայն: Թեեւ անկուսակցական էր, բայց այդ ժամանակ ստացավ որոշ կուսակցությունների զորակցությունը: Ավետիք Բուդաղյանը 2010թ. կրկին առաջադրվեց Գորիսի քաղաքապետի թեկնածու: Հունիսի 20-ին տեղի ունեցած քվեարկության արդյունքներով ստացավ 3138 ձայն (37.3%): Վերջին ընտրություններն անցան գերլարված պայմաններում, ինչը նկատելի էր ամբողջ նախընտրական շրջանում: Պատահական չէ, որ 2010թ. հունիսի 15-ին Ավետիք Բուդաղյանն ինքնաբացարկ ներկայացրեց N 37 ԸԼՀ: Հանձնաժողովը, սակայն, մերժեց ինքնաբացարկի դիմումը՝ նկատի ունենալով, որ դրա համար օրենքով սահմանված ժամկետը սպառվել է: Ավետիք Բուդաղյանը շարունակեց պայքարը. նրա թիմին հաջողվեց իր շուրջը հավաքել տեղական այն ուժերին, որոնք դժգոհ էին քաղաքային ու տարածքային իշխանություններից: Ընտրության օրը, սակայն, տեղի ունեցավ մեկ այլ արտառոց պատմություն եւս: Նրա եղբայր

Շարունակությունը՝ էջ 3

# ՍՈՒՐԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ. «Ես այլեւս չեմ կատարում Սյունիքի մարզպետի պարտականությունները»



**Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանի հայտարարությունը**

Ցավում եմ, որ չէի կարող ու չկարողացա կանխել իմ առանձնատան մոտ տեղի ունեցած ողբերգական միջադեպը, հիմա արդեն բոլոր հարցերի պատասխանը պիտի տա օբյեկտիվ քննությունը: Յուրաքանչյուրը պետք է ըստ իր կատարածի պատասխան տա: Այդ թվում եւ Սուրեն Խաչատրյան ՀՀ քաղաքացին: Ես որոշել եմ թողնել մարզպետի իմ լիազորությունները մինչեւ նախաքննության ավարտը եւ արդեն իմ վերադաս մարմնից ստացել եմ թույլտվություն: Այս պահից սկսած ես այլեւս չեմ կատարում Սյունիքի մարզպետի պարտականությունները:

**3 հունիսի 2013թ.**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

## ՈՐՈՇՈՒՄ

**6 հունիսի 2013 թվականի, N45-Ա**

Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 88.1-ին հոդվածով եւ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.7-րդ կետը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

**Սուրեն Խաչատրյանին ազատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի պաշտոնից՝ իր դիմումի համաձայն:**

e-gov.am

# Գորիս. հոգեցունց միջադեպ, սպասումներ

## ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

2013թ. հունիսի 1-ի երեկոյան Սյունիքի մարզպետի առանձնատան մոտ տեղի ունեցած ողբերգական պատահարը շարունակում է մնալ հանրապետության ամբողջ հասարակության ուշադրության կենտրոնում: Շարունակում են տարաբնույթ վարկածներ շրջանառվել կատարվածի իրական պատճառների, կատարվածին նախորդած խորհրդավոր խնջույքի, բուն իրադարձության մանրամասների, ողբերգությունից հետո իրավապահների կողմից իրականացրած միջոցառումների, քաղաքական վերնախավի՝ խնդրո առարկայի հանդեպ ունեցած դիրքորոշման վերաբերյալ: Շարունակում են նորանոր տեղեկություններ լույս աշխարհ գալ՝ մի մասն առանց հիմքերի, մի մասը՝ մտացածին, հորինված եւ հատուկ շրջանառության մեջ դրված... Մինչդեռ Գորիսում կատարվածն այնպիսի ողբերգություն է, քաղաքն ու շրջանն այնպիսի ալեկոծված եւ հոգեցունց վիճակում են (դա ցույց տվեց նաեւ Ավետիք Բուդաղյանի հուղարկավորությունը՝ հազարավորների մասնակցությամբ, որ տեղի ունեցավ հունիսի 4-ին), որ ամեն մի անզգույշ, չստուգված, չհիմնավորված արտահայտություն եւ տեղեկատվություն նոր խնդիրներ է առաջացնում (եւ կշարունակի առաջացնել): Սա այն դեպքն է, որ, ցավոք, կարող է եւ նորանոր դրսեւորումներով շարունակություն ունենալ: Ուրեմն եւ՝ ստուգենք ամեն մի վարկածի, ամեն մի տեղեկատվության իսկություն ու հավաստիություն եւ նոր միայն մատուցենք հանրությանը: Միաժամանակ՝ աղ չցանենք մարդկանց վերքերին, որոնք, առանց այդ էլ, շատ խորն են: Հետին թվով մարգարեի, տառապյալի ու մարտնչողի, համարձակի ու անաչառի ծիրանի չձգենք մեր՝ քանիցս ապացուցված անկար ուսերին: Հիշենք, որ կատարվածի համար ամենքս էլ մեղավորության բաժին ունենք: Չփորձենք հեռվից Գորիսը սիրողի ու գորիսյան իրականության համար չարչարանքի ուղի ելած մարդու կեցվածք ընդունել: Չփորձենք բոլոր գորիսեցիների անունից խոսք ասել ու շառլատանության, փարիսեցիության՝ վաղուց զորացրված հրձիգներին վերստին ասպարեզ բերել: Գորիսն ու ընդհանրապես Սյունիքը շառլատաններից ու փարիսեցիներից խորշում են ոչ պակաս, քան ամենաթողության ճարտարապետներից, երկրամասն ասպատակող հայրենական զավթիչներից, պետության անվամբ ծպտվածներից: Բոլորիս եւ յուրաքանչյուրիս ողջամիտ ու սթափ պահվածքից է, ի վերջո, կախված Գորիսի քաղաքացիական՝ այլեւս հիմնավորապես ճաք տված համերաշխությունը, նաեւ արդարադատության օբյեկտիվ ընթացքը, որին սպասում ենք: Սպասում ենք նաեւ հանրապետության քաղաքական ղեկավարության ինքնախարազանմանը, քանզի երկրի քաղաքական ղեկավարությունն է թիվ մեկ մեղավորն ու պատասխանատուն գորիսյան ողբերգության եւ առհասարակ սյունիքյան խոտորված եւ անարգված իրականության համար: Ի դեպ, թե որքանով կշարունակվի Սյունիքին ծաղրելու՝ տարիների

Շարունակությունը՝ էջ 7

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ ■ ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ՝ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ
ՇԱԲԱԹ ● 8 ՀՈՒՆԻՍԻ 2013Թ ● № 15 (288)

## ԱՐՁԱԳԱՆՔ





ՖՈՏՈԼՈՒՐ

# ԳԵՎՈՐԳ ԿՈՍՏԱՆՅԱՆ. «Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանը չի եղել դեպքի վայրում եւ փոխհրաձգությանը չի մասնակցել. դա փաստ է»

ՀՀ զինվորական դատախազ, ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Գեւորգ Կոստանյանը հունիսի 5-ին հանդիպել է հեռուստաընկերությունների ներկայացուցիչների հետ՝ ներկայացնելով համառոտ տեղեկատվություն՝ 2013թ. հունիսի 1-ին, Գորիսում, Սյունիքի մարզպետ Սուրիկ Խաչատրյանի առանձնատան դիմաց տեղի ունեցած դեպքի առթիվ հարուցված քրեական գործի փաստական հանգամանքների մասին: Զինվորական դատախազը մասնավորապես հայտնել է հետեւյալը. *«Տեղի է ունեցել զինված հարձակում Սյունիքի մարզպետ Սուրիկ Խաչատրյանի տան դիմաց՝ փողոցում, հարձակման ընթացքում տեղի է ունեցել փոխհրաձգություն, որի հետեւանքով 1 անձ մահացել է, 2 անձ՝ ստացել հրազենային մարմնական վնասվածքներ: Նախաքննությունը սկսել եւ վարել է Սյունիքի մարզի քննչական բաժինը, այնուհետեւ դեպքից մի քանի ժամ անց գործը փոխանցվել է ըստ քննչական ենթակայության՝ ՊՆ քննչական ծառայությանը եւ համապատասխանաբար անցել զինվորական դատախազության հսկողության տակ: Նախաքննության թե՛ սկզբնական, թե՛ հաջորդող փուլերում կատարվել են անհետաձգելի քննչական գործողություններ, խուզարկություններ, առգրավումներ, հարցաքննություններ, դեպքի վայրի զննություն, նշանակվել են բազմաթիվ փորձաքննություններ՝ դատաբժշկական, դատաձգաբանական, մատնադրոշմային, կենսաբանական եւ այլն: Առաջնահերթ, սկզբնական քննչական գործողությունների արդյունքում գործով ներգրավվել է երկու*

Շարունակությունը՝ էջ 4

# ՎԼԱԴԻՄԻՐ ԳԱՍՊԱՐՅԱՆ. «Արյամբ հարց չի լուծվում, եթե որոշ բթամիտներ չեն հասկանում՝ կհասկանան»

Սյունիքի աղմկոտ միջադեպի կապակցությամբ NEWS.am-ի հարցազրույցը ոստիկանության պետ Վլադիմիր Գասպարյանի հետ

**– Պարոն Գասպարյան, օրեր առաջ հայտարարել էիք, որ Սյունիքի մարզպետ Սուրիկ Խաչատրյանը գողական չէ, մարզպետ է: Տեղի ունեցած աղմկոտ սպանությունից հետո ի՞նչ գնահատական կտաք մարզպետին:**

– Եվս մեկ անգամ կրկնում եմ, որ, այո, Սուրեն Խաչատրյանը մարզպետ էր, այլ ոչ թե գողական, բառերի իմաստը պետք է ճիշտ ընկալել: Գողական ասելով՝ ես այլ բան եմ պատկերացնում. այսպես ասեմ, դա մի ուղի է, որ մարդն ընտրում է ու դրանով առաջնորդվում: Իսկ ձեր պատկերացմամբ, ինչպես հասկացա, մարդ է, որն օգտագործում է որոշակի բառապաշար: Դուք քաղաքացի եք, կարող եք նման հայտարարություններ անել՝ մարդը կրիմինալ է, կրիմինալ չի, իսկ ես իրավաբան եմ, եւ դրա իրավունքը չունեմ: Անմեղության կանխավարկած կա: Բայց իմ ասածներից շատ մարդիկ պետք է հետեւություններ անեն...

**– Պարոն Գասպարյան, Գյումրիում հայտարարեցիք, որ այս երկրում այլեւս արյամբ հարցեր չեն լուծվելու, սակայն, ինչպես տեսնում եք, շարունակվում է արյամբ հարցեր լուծել...**

– Իհարկե, մեր երկրում զոռբայությամբ, զենքով, արյամբ հարց չի լուծվում: Իսկ եթե որոշ բթամիտներ չեն հասկանում՝ կհասկանան: Դա չի նշանակում, որ այլեւս հանցագործություններ չեն լինելու մեր երկրում: Ոչ մի տեղ ոչ մի երկրում, ոչ մի հասարակությունում ապահովագրված չեն վեճերից, կռիվներից եւ այլ երեւույթներից: Խնդիրն այն է, թե ինչպես է աշխատում ոստիկանու-

Շարունակությունը՝ էջ 4

# «Սյունիքի մարզպետարանը դուրս է եկել իր լիազորությունների շրջանակից»

**ՀՀ զինվորական դատախազ Գագիկ Կոստանյանը մտահոգիչ է համարում այն փաստը, որ Սյունիքի մարզպետարանը տարածել է հունիսի 1-ին արդեն նախկին մարզպետ Սուրիկ Խաչատրյանի տան մոտ տեղի ունեցած արյունահեղության տեսագրության սեփական մեկնաբանությունը: Այդ մասին նա ասաց iLur.am-ի հետ հարցազրույցում.**

**– Պարոն Կոստանյան, խնդրում եմ, Ձեր գնահատականը տվեք Սյունիքի մարզպետարանի տարածած՝ հունիսի 1-ի դեպքերի տեսագրության սղագրությունը հրապարակելու փաստին:**

– Նկատի ունենալով այն հանգամանքը, որ այդ տեսաձայնագրությունն առգրավվել է դեպքից մի քանի ժամ անց, հետեւաբար՝ այդ տեսագրությունն առնվազն մի քանի ժամով հասանելի է եղել մարզպետի ընտանիքի բոլոր անդամներին, եւ վստահ եմ, որ վերջիններս տեսագրության պատճենները վերցրել են: Բայց ինձ համար անընդունելի է ոչ թե տեսագրության սղագրման, հրապարակման փաստը, որովհետեւ այդ տեսագրության սղագրությունն ամեն մարդ կփորձի տալ իր յուրովի մեկնաբանությամբ, ընկալմամբ եւ արտահայտմամբ, այլ ինձ համար մտահոգիչ է, որ պետական մարմինը, այս դեպքում՝ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմը, հայտարարություններ է տարածում այնպիսի հարցի հետ կապված, որ բացարձակ չի առնչվում իր լիազորությունների եւ գործառույթների հետ: Ինձ համար դա է մտահոգիչ եւ անհասկանալի:

**– Այս հրապարակումը նախաքննության գաղտնիության սկզբունքի հետ հակասության մեջ չի՞ մտնում:**

– Կրկնեմ՝ այդ տեղեկատվությունը, մինչեւ նախաքննության մարմնի ձեռքում հայտնվելը՝ արդեն հասանելի է եղել: Ֆորմալ առումով մենք դա չենք կարող դիտարկել որպես նախաքննության գաղտնի տվյալների հրապարակում: Միեւնույն ժամանակ, նման սղագրությունը, մեկնաբանությունները բացարձակ որեւէ ազդեցություն չեն կարող ունենալ նախաքննության ընթացքի վրա, հետեւապես նաեւ՝ այդ ձայնագրության վերարտադրությունից բխող հանգամանքների վերաբերյալ իրավական գնահատական տալու վրա: Մարտավարական տեսակետից այդ հրապարակման փաստն ինձ բացարձակ չի հետաքրքրում:

**– Բայց փաստացի հանրության սեփականությունն է դարձել այդ տեսագրությունների սղագրությունը՝ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի վերարտադրությամբ: Միգուցե դրանում աղճատումներ կան, կամ թերի ներկայացված փաստեր:**

– Սղագրությունը ես չեմ ընթերցել եւ չեմ էլ պատրաստվում ընթերցել, որովհետեւ, կրկնեմ՝ այդ սղագրությունը ճշգրիտ է թե ոչ ճշգրիտ, դրանում տեղ գտած արտահայտությունները, ձեւակերպումները համապատասխանում են տեսագրության բովանդակությանը, թե ոչ՝ ինձ չի հետաքրքրում եւ գործում որեւէ արժեք չի կարող ունենալ: Երբ որ տեսագրությունը դատական քննության ընթացքում հրապարակվի, հասարակության ցանկացած անդամ հնարավորություն կունենա ճշտելու, նախ, այդ սղագրության հավաստիությունը կամ կողմնապահությունը՝ նկատի ունենալով հայտարարությունը տարածողների մեկնաբանման եւ վերարտադրման օբյեկտիվության հարցը, եւ երկրորդ՝ ամենակարեւորը, երբ ինքը՝ տեսագրությունը, դառնա հանրության սեփականությունը, այդ բոլոր կասկածները, մտահոգությունները վստահաբար կփարատվեն:

**– Այսինքն, այս փուլում այդ տեսագրությունները չե՞ն հրապարակ-**

Շարունակությունը՝ էջ 7

## լուրեր

ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանի 2013թ. հունիսի 6-ի կարգադրությամբ Սյունիքի մարզպետի ժամանակավոր պաշտոնակատար է նշանակվել փոխմարզպետ Արա Դոլունցը: Վարչապետի կարգադրությունը հունիսի 7-ին մարզպետարանի աշխատակազմին է ներկայացրել ՀՀ տարածքային կառավարման նախարարի տեղակալ Վաչե Տերտերյանը՝ մարզպետարանում անցկացված աշխատանքային խորհրդակցությունում, որին հրավիրված չէին լրատվամիջոցների ներկայացուցիչները:

---

«Քաունթերփարթ ինթերնեշնլ» կազմակերպության քաղաքացիական հասարակությանը եւ տեղական ինքնակառավարմանն աջակցության ծրագրի շրջանակում փորձի փոխանակման նպատակով՝ Լոռու, Տավուշի, Շիրակի եւ Գեղարքունիքի մարզերի համայնքների ղեկավարների եւ համայնքի աշխատանքային խորհրդի անդամների համար եռօրյա այց էր կազմակերպվել Սյունիքի մարզ: Մայիսի 29-ին պատվիրակությունը եղավ Սիսիանում: Քաղաքապետարանում տեղի ունեցած հանդիպման ընթացքում արծարծվեցին տեղական ինքնակառավարմանն առնչվող խնդիրներ: Հաջորդ հանգրվանը Գորիսն էր, հյուրերի համար Խնձորեսկի եւ Քարահունջի համայնքներում շրջայց-հանդիպում կազմակերպվեց: Մայիսի 30-ին պատվիրակությունը հյուրընկալվեց Կապանի քաղաքապետարանում, որտեղ կայացած հանդիպմանն անդրադարձ եղավ տեղական ինքնակառավարման զարգացման խնդիրներին: Մայիսի 31-ին պատվիրակությունը եղավ Ագարակում եւ Մեղրիում, քննարկումներ կայացան երկու քաղաքային համայնքների աշխատանքային խորհուրդների անդամների հետ:

---

Երեխաների պաշտպանության միջազգային օրվա առթիվ՝ հունիսի 1-ին, Կապանի մշակույթի կենտրոնի հրապարակում անցկացվեց կավճանկարի մրցույթ, որում լավագույնը ճանաչված աշխատանքների հեղինակները խրախուսվեցին հուշանվերներով: Վ.Սարգսյանի անվան զբոսայգում կազմակերպվել է ցուցահանդես, որին ներկայացվել էին Կապանի արվեստի պետական քոլեջի մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնի, մանկական արվեստի դպրոցի եւ կերպարվեստի դպրոցի սաների գեղանկարչական աշխատանքներ եւ կիրառական արվեստի նմուշներ: Օրվան տոնական երանգներ հաղորդեցին Կապանի մշակույթի կենտրոնի, արվեստի քոլեջի, N1 երաժշտական դպրոցի եւ N8 նախադպրոցական ուսումնական հաստատության սաների ելույթները:

---

Հունիսի 5-ը շրջակա միջավայրի պահպանության օրն է, եւ այդ առիթով Կապանի մշակույթի կենտրոնի դահլիճում օրվա խորհրդին պատշաճող միջոցառում կազմակերպվեց: Տեսաֆիլմի օգնությամբ ներկայացվեց «Դինո գոլդ մայնինգ քամփնի» ՓԲԸ բնապահպանական բաժնի գործունեությունը: Այնուհետեւ ներկայացվեց «Նորին մեծություն երկիր մոլորակ» բեմադրությունը (սցենարի հեղինակ եւ բեմադրիչ՝ Սուսաննա Մարտիրոսյան): Միջոցառման ավարտին շնորհակալագրեր հանձնվեցին միջոցառման կայացմանը նպաստած անձանց:

## ԱՌԱՆՑ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ

# Ողբերգություն Գորիսում



Գնդապետ Արտակ Բուդաղյան

Սկիզբը՝ էջ 1

Արտակ Բուդաղյանը, ով այդ ժամանակ Գորիսի զորամասի հրամանատարն էր, մեղադրվեց եղբոր օգտին աշխատանքներ կատարելու մեջ, ինչի համար էլ ընտրությունից չորս օր անց՝ հունիսի 24-ին, ազատվեց հրամանատարի պարտականություններից: Այդ ամենը, սակայն, մոռացության էր մատնվել, եւ Սյունիքի մարզպետի ու Բուդաղյանների գերդաստանի հարաբերությունները վերադարձել էին նախկին՝ դրական հուն: Վերականգնվել էին երկու ընտանիքի բարեկամական շփումները, չէ՞ որ Սուրեն Խաչատրյանն Ավետիք Բուդաղյանի քավորն էր:

■ Հունիսի 1-ի ողբերգության ժամանակ հրազենային վնասվածքով վիրավորվել եւ Երեւանի կենտրոնական կայազորային հոսպիտալ է տեղափոխվել Արտակ Բուդաղյանը: Մինչ այդ՝ հունիսի 1-ի միջադեպից անմիջապես հետո, նրան տեղափոխել են Գորիսի բժշկական կենտրոն: Այնուհետեւ, ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության արագ հակազդման բաժնի օպերների ուղեկցությամբ, շտապ օգնության մեքենայով նրան տեղափոխել են Երեւան: Հունիսի 5-ին հոսպիտալի վիրաբուժական բաժանմունքի ավագ կոորդինատոր Սեւակ Շահբազյանը լրագրողներին ներկայացրել է տեղեկություններ Արտակ Բուդաղյանի առողջական վիճակի մասին: Ըստ նրա՝ **«Ունենք չնչին, բայց դրական դինամիկա, այնուամենայնիվ, ներկա պահին Արտակ Բուդաղյանի վիճակը գնահատվում է կայուն ծանր: Հիվանդի գիտակցությունը պարզ է, նա շփվում է մարդկանց հետ: Բայց, ինչպես ցանկացած ռեանիմացիոն բաժանմունքի հիվանդի պարագայում, Արտակ Բուդաղյանի մոտ եւս իրավունք ունեն մտնելու ռեանիմացիոն անձնակազմի աշխատակիցները, մասնագետները՝ բժիշկները, ովքեր կոմպետենտ են հիվանդով զբաղվելու համար: Իսկ հարազատներից, իմ տեղեկություններով, նրա մոտ միայն կինն է մտնում»:** Գնդապետ Արտակ Բուդաղյանի առողջական վիճակը ծանր կայուն է գնահատել նաեւ ՊՆ կենտրոնական կլինիկական զինվորական հոսպիտալի պետ Արամ Ասատուրյանը. **«Գնդապետի գիտակցությունը տեղն է, ֆիզիկական վիճակը՝ կայուն, կյանքին վտանգ չի սպառնում: Ավելին՝ նա կարողանում է շփվել հարազատների եւ բժիշների հետ, սակայն դեռեւս այն վիճակում չէ, որ կարողանա ցուցմունք տալ»:** Ասատուրյանի խոսքով՝ երբ Բուդաղյանի առողջական վիճակը ծանր կայունից բարելավվի մինչեւ միջին ծանրության, նրան վերակենդանացման բաժնից կտեղափոխեն ընդհանուր բաժին:

*Արտակ Բուդաղյանը ծնվել է 1971թ. դեկտեմբերի 16-ին, Գորիս քաղաքում: Ավարտել է տեղի N4 միջնակարգ դպրոցը, Երեւանի պետական գյուղատնտեսական, Մոսկվայի Մ.Ֆրունզեի անվան ռազմական ակադեմիաները: 1990թ. կամավորագրվել է հայրենիքի պաշտպանությանը, մասնակցել ՀՀ հարավարեւելյան սահմանների համար մղված պաշտպանական, Կուբաթլուի, Լաչինի շրջկենտրոնների ու դրանց մի շարք գյուղերի ազատագրման մարտերին: 1995թ. հոկտեմբերին ծառայության է զորակոչվել ՀՀ զինված ուժեր: Եղել է վաշտի հրամանատարի տեղակալ, հրամանատար, զորամասի օպերատիվ բաժնի ավագ սպա, տեղակալ: 2003թ. նշանակվել է ՀՀ ՊՆ զորամասի հրամանատար, 2007թ. հուլիսից զբաղեցրել է ՀՀ ՊՆ մեկ այլ զորամասի հրամանատարի պաշտոնը: 2010 թվականից ԼՂՀ տարածքում տեղաբաշխված մեկ այլ զորամասի հրամանատար է: Ա.Բուդաղյանն իրեն դրսեւորել է որպես կարգապահ, քաջ, պահանջկոտ, ուժեղ բնավորության ու կամքի տեր, իր զորամասի առջեւ դրված խնդիրները բարձր պատասխանատվությամբ կատարող սպա-հրամանատար: Պարգեւատրվել է «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 2-րդ աստիճանի, «Մարտական ծառայության» համար եւ ՀՀ ՊՆ կողմից «Գարեգին Նժդեհ», «Վազգեն Սարգսյան», «Անբասիր ծառայության համար» 1-ին, 2-րդ աստիճանի եւ ԼՂՀ «Մայրական երախտագիտություն» մեդալներով, «Սյունյաց արծիվներ», «Լեռնահայաստանի արծիվ» ոսկյա հուշամեդալներով:*

■ Հունիսի 1-ի միջադեպից մի քանի ժամ առաջ Գորիսի մերձակայքում գտնվող «Սդղի լիճ» անվանյալ վայրում, ըստ տարածված տեղեկությունների, խնջույք է եղել, որին մասնակցել են ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանը, Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանը, Ավետիք Բուդաղյանը, Մաքսիմ Հակոբյանը, Գորիսի քաղաքապետ Նելսոն Ոսկանյանը: Վարկածներից մեկի համաձայն՝ խնջույքի ժամանակ վեճ է ծագել, որը շարունակվել է ժամեր հետո Սյունիքի մարզպետի տան մոտ: ԼՂՀ նախագահի մամուլի խոսնակ Դավիթ Բաբայանը պարզաբանել է, որ Բակո Սահակյանի մասնակցությամբ կերուխում չի եղել: **«Աշխատանքային այցով Բակո Սահակյանը հունիսի 1-ին եղել է Սյունիքի մարզում, ունեցել հանդիպումներ, պայմանավորվածություններ, քննարկել զարգացման ծրագրեր: Երեկոյան՝ հետդարձին, թեթեւակի հաց են կերել ու շարունակել ճանապարհը: ԼՂՀ նախագահի անունը կապել ինչ-որ ճաշկերույթի հետ, սենսացիայի անհաջող փնտրտուք է»:** Իսկ «Ազատություն» ռադիոկայանին Դավիթ Բաբայանը հետեւյալ պատասխանն է տվել. **«Այդպիսի մի բան չի եղել, մենք նման խնջույքների չենք մասնակցել, եկել ենք սիմվոլիկ նստել, հաջողություն ասել, գնացել: Հիմա, այդ դեպքը եղել է դրանից, ինչքան գիտեմ, մի հինգվեց ժամ հետո: Ես Արտակին չեմ ճանաչում, Ավետին ճանաչում եմ, տեսել եմ, հա, բայց որեւէ այնպիսի բան չի եղել այնտեղ, նորմալ ուղղակի եկել ենք, մասնակցել ենք: Ոչ մի բան չի եղել այնտեղ, եղել են Սյունիքի պատասխանատուները, գործարարները… մենք ընդհանրապես ոչ մի բան չենք տեսել, ընդհանրապես, չենք էլ ճանաչում այդ մարդկանց: Առավոտյան ենք իմացել, որ այդպիսի դեպք է եղել՝ լրատվամիջոցներից: Որեւէ բան չենք նկատել այնտեղ, որ թշնամանք լինի, ինչ-որ բան լինի..»**: Այդուհանդերձ Գորիսում չեն դադարում ասեկոսեները խորհրդավոր այդ ճաշկերույթի մասին: Մինչդեռ ԼՂՀ նախագահի ու Սյունիքի մարզպետի աշխատակազմերը դեռեւս պաշտոնապես չեն հրապարակել տեղեկատվություն ԼՂՀ նախագահի Սյունիք կատարած այցի ընթացքի եւ արդյունքների մասին. չէ՞ որ այցը, ինչպես ասում են, պաշտոնական էր: Շատ տարօրինակ է նաեւ, որ պաշտոնական այցով Սյունիք ժամանած ԼՂՀ նախագահի այցի մասին չէին իրազեկվել մարզի լրատվամիջոցները:

■ 2013թ. հունիսի 1-ին՝ ժամը 23:00-ի սահմաններում, Գորիս քաղաքում, Սյունիքի մարզպետ Ս. Խաչատրյանին պատկանող առանձնատան դիմաց տեղի ունեցած վիճաբանության ընթացքում Ավետիք Բուդաղյանի սպանության դեպքի առթիվ հարուցված քրեական գործի շրջանակներում երկու անձի՝ Տիգրան Խաչատրյանին եւ Զարզանդ Նիկողոսյանին մեղադրանք է առաջադրվել: Նախաքննության ընթացքում ձեռք բերված ապացույցների հիման վրա Տ.Խաչատրյանին եւ Զ.Նիկողոսյանին հունիսի 3-ին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով, 112-րդ եւ 235-րդ հոդվածների 1-ին մասերով, համապատասխանաբար՝ շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով սպանության, դիտավորությամբ մեկ ուրիշի առողջությանը ծանր մարմնական վնասվածք պատճառելու եւ ապօրինի զենք-ռազմամթերք ձեռք բերելու եւ պահելու համար: Նույն օրը Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանը բավարարել է Զ.Նիկողոսյանի եւ Տ.Խաչատրյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին նախաքննական մարմնի միջնորդությունը եւ նրանք տեղափոխվել են «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկ:

■ Հունիսի 2-ին, ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության եւ նույն վարչության արագ հակազդման բաժնի օպերները, ոստիկանության կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչության եւ նույն վարչության հատուկ նշանակության ջոկատի աշխատակիցները ոստիկանության Սյունիքի մարզային վարչության եւ ոստիկանության Գորիսի, Սիսիանի եւ Կապանի բաժինների ծառայողների հետ Սյունիքի մարզում՝ մի խումբ անձանց տներում, հայտնաբերել են մեծ քանակի զենք-զինամթերք: Հայտնաբերված ամբողջ զենք-զինամթերքը քննչական խմբի կողմից ընթերակաների ներկայությամբ առգրավվել, փաթեթավորվել եւ կնիքվել են, ուղարկվել ոստիկանության փորձագիտական վարչություն, որպեսզի պարզվի, թե արդյո՞ք նշված հրազեններն օրինական են, թե՞ ոչ, եւ այն օգտագործվե՞լ է հունիսի 1-ի միջադեպի ժամանակ:



Միջադեպից մի քանի ժամ առաջ «Սդղի լիճ» անվանյալ վայրում խնջույք է եղել, որին մասնակցել են **ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանը, Մաքսիմ Հակոբյանը, Գորիսի քաղաքապետ Նելսոն Ոսկանյանը,** Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանը, Ավետիք Բուդաղյանը...

■ Հունիսի 2-ին լրատվամիջոցները տարածեցին մի հաղորդագրություն, ըստ որի՝ Սյունիքի մարզպետի տան բակում տեղադրված տեսախցիկները նկարահանել են միջադեպը, եւ ոստիկանները ձայնագրությունն առգրավել են: Որոշ տեղեկությունների համաձայն՝ առգրավված տեսաժապավենները նախապես հանվել էին, որի պատճառով սկզբում հնարավոր չի եղել պարզել միջադեպի մասին իրականությունը: Սակայն ավելի ուշ Գորիս ժամանած ՀՀ զինդատախազը տեսախցիկներից առգրավել է հիշողության քարտերը, որի շնորհիվ պարզ են դարձել որոշ հանգամանքներ եւս:

■ Նախաքննության ընթացքում պարզված համարելով, որ տեղի ունեցած փոխհրաձգության մասնակիցներից Արտակ Բուդաղյանը հանդիսանում է պաշտպանության բնագավառի պետական լիազոր մարմնում ծառայություն իրականացնող անձ, 02.06.2013թ. որոշում է կայացվել քրեական գործն ըստ քննչական ենթակայության ՀՀ ՊՆ քննչական ծառայություն ուղարկելու մասին, նույն օրը գործը վարույթ է ընդունվել ՀՀ ՊՆ ՔԾ ՀԿԳ քննչական բաժնում: Քանի որ նախաքննության ընթացքում հայտնաբերվել եւ առգրավվել են մեծ քանակի զենք, որոշումներ են կայացվել դատաբժշկական, դատաձգաբանական փորձաքննություններ նշանակելու մասին, կատարվել են խուզարկություններ եւ այլ անհետաձգելի քննչական գործողություններ:

■ Հունիսի 5-ին Սյունիքի մարզպետարանի աշխատակազմը տարածել է մի հայտարարություն, որի մեջ ներկայացվել է հունիսի 1-ի երեկոյան տեղի ունեցած արյունահեղության տեսագրության բովանդակությունը, որը նկարահանվել է մարզպետի տան բակում դրված երկու տեսախցիկի միջոցով: Նույն օրը երեկոյան լրատվամիջոցների եւ քաղաքական գործիչների ու փորձագետների կողմից հարց էր առաջադրվել՝ որքա՞ն էր օրինական Սյունիքի մարզպետարանի կողմից հաղորդագրության տարածումը, որով ներկայացվում է Սյունիքի մարզպետի տան մոտ տեղի ունեցած հայտնի դեպքի տեսագրության նկարագրությունը: Ի պատասխան հարցմանը՝ ՀՀ գլխավոր դատախազի մամլո խոսնակ Սոնա Տռուզյանը հայտնել է. **«Փորձաքննության փուլում գտնվող տեսագրության բովանդակության վերաբերյալ չլիազորված պետական մարմնի կողմից պաշտոնական հաղորդագրության տարածումն անթույլատրելի է»:** Նա հիշեցրել է նաեւ, որ տվյալ դեպքով տեսագրությունը դեռ փորձաքննության փուլում է, եւ դրա ավարտից հետո է միայն հնարավոր խոսել դրա ամբողջականության եւ բովանդակության վերաբերյալ, ինչի վերաբերյալ լիազորված են խոսել վարույթն իրականացնող մարմինն ու դատավարական ղեկավարում իրականացնող դատախազը: Բուդաղյանների հարազատները տեսագրության բովանդակությունը կեղծված են համարել եւ առաջ են քաշել իրենց վարկածը:

■ Ըստ MediaMall-ի՝ Տիգրան Խաչատրյանի եւ Զարզանդ Նիկողոսյանի պաշտպանությունն ստանձնել են փաստաբանների պալատի փաստաբաններ Կարմեն Սահակյանը եւ Մարտին Զիլֆուղարյանը: Հնարավոր է նրանց միանա նաեւ փաստաբանների պալատի նախագահ Ռուբեն Սահակյանը:

**«Սյունյաց երկիր»**

Սյունյաց երկիր
www.syuniacyerkir.am

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ ■ ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ՝ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ

ՇԱԲԱԹ ● 8 ՀՈՒՆԻՍԻ 2013Թ ● № 15 (288)

ԱՐՁԱԳԱՆՔ

# ԳԵՎՈՐԳ ԿՈՍՏԱՆՅԱՆ. «Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանը չի եղել դեպքի վայրում եւ փոխհրաձգությանը չի մասնակցել. դա փաստ է»

**Սկիզբը՝ էջ 2**

*մեղադրյալ. երկու անձի մեղադրանք է առաջադրվել եւ, ինչպես հայտնի է, միջնորդություն ներկայացվել՝ նրանց նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին, ինչը բավարարվել է»:*

Գ.Կոստանյանը նաեւ փաստել է, որ մեղադրյալները գտնվում են «Նուբարաշեն» ՔՀԿ-ում եւ այնտեղ կմնան առնվազն մինչեւ նախաքննության ավարտը՝ նկատի ունենալով, որ գործի նախաքննությունն իրականացնում է ՊՆ հատկապես կարեւոր գործերի քննության բաժինը, որը գտնվում է Երեւանում, եւ, հետեւաբար, կալանավորված անձանց Երեւանում գտնվելն անհրաժեշտություն է:

*«Արարքների որակումներն ու գնահատականները մենք դեռեւս պետք է քննարկենք համապատասխանաբար ձեռք բերված ապացույցների համադրման արդյունքում. ընդ որում՝ այդ ապացույցներն առնչվում են ինչպես անմիջապես դեպքին, այնպես էլ՝ նախորդող եւ հաջորդող բոլոր իրադարձություններին: Հետեւապես, դեպքին հաջորդող եւ նախորդող իրադարձություններում ներգրավված եւ որեւէ կերպ առնչված յուրաքանչյուր անձի գործողությունների իրավական գնահատականը հաջորդելու է»,* – հայտարարել է զինվորական դատախազը:

Անդրադառնալով դեպքի տեսաձայնագրությունն առգրավելու եւ այն հանրությանը ներկայացնելու հարցադրումներին՝ Գ.Կոստանյանը փաստելով, որ տեսագրությունը, տեսաձայնագրող սարքերն ու սարքավորումները առգրավվել են, նշել է.

*«Այո՛, դրանք գտնվում են նախաքննություն իրականացնող մարմնի տրամադրության տակ: Այս պահին դրա հրապարակման անհրաժեշտությունը չկա. նկատի ունենալով, որ սարքերը տրամադրվել են փորձագետներին՝ համապատասխան փորձաքննություններ կատարելու համար: Այնուհետեւ մենք հանրությանը կտեղեկացնենք եւ հնարավորություն կտանք դիտելու հատվածներ, իսկ նախաքննության ավարտից հետո՝ արդեն դատաքննության ընթացքում, նկատի ունենալով, որ դատաքննությունը դռնբաց է, հանրությունը հնարավորություն կունենա ինքնուրույն դիտել ամբողջ տեսաձայնագրությունը եւ գնահատականներ տալ: Համենայնդեպս, փոխհրաձգությանը մասնակցած անձանցից 2-ը կալանավորված են: Մեկ անձը մահացել է, իսկ մյուս անձի՝ Արտակ Բուդաղյանի գործողություններին առանձին գնահատականներ կտրվեն»:*

Փոխհրաձգությանը 4 անձի մասնակից լինելու վերաբերյալ լրագրողի ճշգրտող հարցադրմանն ի պատասխան՝ զինդատախազը նշել է.

*«Այո, հասկանում եմ՝ ձեր հարցն ինչ ուղղվածություն ունի: Կարող եմ միանշանակ ասել եւ դուք հետագայում տեսաձայնագրություններով կհամոզվեք, որ Սյունիքի մարզպետ Սուրիկ Խաչատրյանը չի եղել դեպքի վայրում եւ փոխհրաձգությանը չի մասնակցել: Դա փաստ է, որում դուք ինքներդ կհամոզվեք: Դա արձանագրված է ժապավենի վրա, որը դիտելուց հետո դուք ինքներդ կհամոզվեք դրանում»:*

Գեւորգ Կոստանյանը նաեւ երաշխավորել է, որ քրեական գործով կապահովվի քննության օբյեկտիվությունը, լրիվությունն ու ամբողջականությունը: «*Արդարադատությանն ուղղված ցանկացած գործունեություն իր հիմքում ունի մի շարք գործոններ: Ամենակարեւոր գործոնը հանրային վստահությունն է, որ պետք է լինի: Հետեւաբար, արդարադատությանն ուղղված գործունեությունը պետք է ունենա բարոյական հենք եւ իրավական հիմք: Որեւէ կաշկանդվածություն ոչ միայն չի կարող լինել, այլ որեւէ կաշկանդվածությունը՝ քննիչի, դատախազի, իմ ու հետագայում դատարանի կողմից կարող ենք համարել անբարոյական վարքագիծ*», – հայտարարել է զինդատախազ Գ.Կոստանյանը եւ ավելացրել. *«Քաղաքական կամ որեւէ այլ նրբերանգները չեն կարող ազդել նախաքննության օբյեկտիվության ու բազմակողմանիության վրա: Արդեն ասացի՝ այն պարզ պատճառով, որ մենք առնվազն բարոյական պարտականություն ու պատասխանատվություն ունենք առաջին հերթին մեր երեխաների, մեր եւ հանրության առաջ»:*

Նա նաեւ նշել է, որ նախաքննության շահերից ելնելով՝ այլ մանրամասներ այս փուլում չեն կարող հրապարակվել, սակայն հանրությանը թույլատրելիության սահմաններում պարբերաբար տեղեկատվություն կտրամադրվի:

**http://www.genproc.am**

# Մաքսիմ Հակոբյանը դեմ չէ որդու՝ Սյունիքի մարզպետ դառնալուն

**Պարզվում է՝ Քաջարանի պղնձամոլիբդենային կոմբինատի տնօրեն Մաքսիմ Հակոբյանն է ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանին, մարզպետ Սուրեն Խաչատրյանին, Գորիսի քաղաքապետի նախկին թեկնածու, սպանված Ավո Բուդաղյանին եւ մյուսներին հրավիրել Սոդի լիճ՝ հացկերույթի, որից ժամեր անց էլ մարզպետի տան մոտ տեղի է ունեցել արյունոտ միջադեպը: Այս մասին գրում է «Ժամանակ» թերթը, որը զրուցել է Մաքսիմ Հակոբյանի հետ: Ներկայացնում ենք հատված հարցազրույցից.**

**– Պարոն Հակոբյան, իսկ ո՞րն է Ձեր գնահատականը կատարվածի:**

– Ես շատ խիստ քննադատում եմ, չի կարելի էդպիսի բան անել: Դա մեր հասարակության համար շատ անընդունելի երեւույթ է:

**– Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանը, փաստորեն, ժամանակավոր հրաժարական է տվել: Տեսակետներ կան, որ այս դեպքից հետո նա պիտի ընդմիշտ հրաժարական տար:**

– Չէ, ինչի համար, եթե ինքը հիմա հրաժարական տա, նշանակում է՝ էն գլխից ընդունում ա մեղավորությունը: Ես ինչ իմանամ՝ ով ա մեղավորը: Քննիչները պիտի քննեն, որ ասեն:

**– Սակայն փաստ է, որ իր տան մոտ է եղել դեպքը, եւ իր տղան է ձերբակալվել:**

– Ձերբակալված է, կպարզեն, հիմա հայտարարություն անել ճիշտ չի լինի: Ճիշտը նա կլինի, որ մանրակրկիտ ուսումնասիրեն, մեղավորներին խիստ պատժեն, որ նման բան չկրկնվի: Շատ անընդունելի բան էր:

**– Պարոն Հակոբյան, հնարավոր է կառավարությունը որոշի, որ Սուրեն Խաչատրյանն այլեւս չի ղեկավարելու Սյունիքի մարզը: Այդ դեպքում ո՞ւմ եք տեսնում մարզպետի պաշտոնում: Հնարավո՞ր է Դուք կամ Ձեր տղան մարզպետ դառնաք:**

– Ես էնքան լավ պաշտոնի եմ, որ էսօր, որ ինձ Ռուսաստանի պրեզիդենտն էլ առաջարկեք, ես չեմ գնա: Շատ հզոր պաշտոնի եմ ես, ինչի՞ պիտի գնամ:

**– Տեւական ժամանակ խոսակցություններ կային, որ Ձեր տղան է ուզում մարզպետ դառնալ:**

– Դե, ով որ նշանակում ա, նրան հարցրեք: Ես հրամանը չեմ կարող տալ, իմ ուժերից վեր ա:

**– Իսկ դուք կուզե՞ք, որ Ձեր տղան դառնա Սյունիքի մարզպետ:**

– Ես չեմ կարող պատասխանել: Իմ տղան ինքնուրույն ա որոշելու: Իմ տղան հասուն տղա ա, գիտությունների թեկնածու, քաղաքական կոփվածություն ունի, ինքը պետք է որոշի, ես իրեն չեմ կարող թելադրել:

**– Կարծում եք՝ կարո՞ղ է լինել մարզպետ:**

– Ես ինչ իմանամ, ինքը կիմանա, կորոշի, ես իմ տղայից հազարավոր կիլոմետր հեռու եմ ապրում...

**news.am**

# ՎԼԱԴԻՄԻՐ ԳԱՍՊԱՐՅԱՆ. «Արյամբ հարց չի լուծվում, եթե որոշ բթամիտներ չեն հասկանում՝ կհասկանան»

Սյունիքի աղմկոտ միջադեպի կապակցությամբ NEWS.am-ի հարցազրույցը ոստիկանության պետ Վլադիմիր Գասպարյանի հետ

**Սկիզբը՝ էջ 2**

թյունը, ինչպես է բացահայտում եւ ինչպես է հասարակությունն օժանդակում դրան եւ այլն, եւ այլն... Այնպես որ, պետք չէ մակերեսային նայել: Երանի այդպես լիներ, ու բոլորը մի խոսքից ընկալեին ու հանցանք չկատարեին: Երանի այդ օրերը գան, բայց՝ ավաղ... Այնպես չի, որ ասեցինք, գրեցիք, էլ չի լինի հանցանք:

Ես համոզված եմ, որ ոստիկանությունը կդառնա պրոֆեսիոնալ, սկզբունքայնությունն էլ ոչ թե ժամանակավոր, այլ՝ անդառնալի, եւ հասարակությունն էլ, ակնկալում եմ, կօգնի այդ հարցում: Կարծում եմ, որ դուք՝ լրագրողներդ էլ մեր կողքին կլինեք:

Ավելացնեմ, որ ծանոթ եմ վերջին օրերին լրատվամիջոցներում ու ֆեյսբուքներում ինձ կամ ոստիկանությանն ուղղված որոշ հարցադրումների, հռետորական հարցերի, կարծում եմ, գոնե հիմա էդպես չպետք է հնչեին: Եկեք խուսափենք իրավիճակին չտիրապետելով գնահատականներ տալուց, անհիմն կարծիքներ հնչեցնելուց, առհասարակ, չարությունից եւ չարակամությունից:

Ոստիկանությունն այսօր շիտակ է, ազնիվ կամ գոնե փորձում է այդպիսին լինել եւ որն ինչ-որ տեղ հաջողվում է, եւ մենք խնդրում ենք այդ հարցում բոլորի օժանդակությունն ու աջակցությունը: Չարությունը, իրավիճակն անտեղի սրելը, սեփական աչքի գերանը չնկատելով՝ ուրիշի աչքի փուշը տեսնելն ապագա չունեցող բաներ են...

**– Ձեր գնահատմամբ, ինչի՞ հետեւանք էր մարզպետի ու հակառակորդների միջեւ տեղի ունեցած փոխհրաձգությամբ ուղեկցված միջադեպը: Արդյո՞ք դա քրեական մթնոլորտի, գողական դրվածքների առկայության, անպատժելիության մթնոլորտի հետեւանք չէր:**

– Զոռբայության, հիմարության եւ այլն, ինչ բացասական բառակապակցություն գիտեք՝ հանգիստ օգտագործեք: Մարդ սպանելը, զենքով հարց լուծելը, արյուն թափելը մեկ բառով չես կարող որակել: Կրկնված կլինեմ, բայց նորից ասեմ՝ որ այդպես չի լինելու, եւ այդ չլինելու համար ունենք եւ կամք, եւ հնարավորություն՝ ցանկացած դեպքի հետեւից գնալու եւ պատժելու: Եվ նման ապրելակերպ ընտրած մարդիկ, նման մտածելակերպ ունեցողները մեր հասարակության մեջ տեղ չեն ունենա եւ գթասրտության ու մարդասիրության չեն հանդիպելու մեր կողմից, որովհետեւ մենք համոզված ենք, որ գթասիրտ ու մարդասեր պետք է լինենք հասարակության, այլ ոչ թե հասարակությանը ձեռնոց նետած ինչ-որ մի երեւույթի նկատմամբ: Եվ այս կապակցությամբ ոստիկանության սկզբունքները ու մոտեցումներն անշրջելի են: Ավելացնեմ, որ ցանկացած ոստիկան, որը հանցավոր կամ այլ կապերի մեջ մտած՝ կարող է դավաճանել այս սկզբունքներին՝ սկսած շարքայինից մինչեւ ոստիկանապետ, կկրի պատասխանատվություն:

**– Պարոն Գասպարյան, նախօրեին Սուրիկ Խաչատրյանի տնից առգրավվել էր մեծ քանակությամբ զենք, զինամթերք, մինչդեռ Դուք դեռեւս Գյումրիում տեղի ունեցած սպանությունից հետո էիք լծվել զինամթերքի հայտնաբերման գործին, ինչո՞ւ Սյունիքում կամ այլ մարզերում նույն օպերացիան չէր կատարվում եւ միայն սպանությունից հետո Սուրիկ Խաչատրյանի տնից հայտնաբերվեց մեծ քանակությամբ զինամթերքը:**

– Ստիպված կլինեմ ասել, որ տեղայնական մտածելակերպով է հարցն ուղղվում ինձ: Եթե ՀՀ ոստիկանության պետը մի հայտարարություն անում է, դա նշանակում է, որ այն վերաբերում է ամբողջ Հայաստանի Հանրապետության տարածքին: Իսկ եթե մարդիկ մտածում են, որ Գյումրիի դեպքերի վերաբերյալ հայտարարությունը միայն Գյումրու տարածքին է վերաբերվում՝ չարաչար սխալվում են: Սակայն եթե ես սխալ եմ ընկալվել, ավելացնեմ՝ այսօր ես մեր հասարակությանը զեկուցում եմ, որ մենք անցկացրել ենք «Զինանոց-2013» միջոցառում եւ նոր ենք այն ավարտել հանրապետության ամբողջ տարածքում, կարծում եմ մոտ օրերս կլինի առգրավված զենք-զինամթերքի քանակի վերաբերյալ տեղեկատվություն՝ մարզերով, քաղաքներով եւ այլ վայրերով:

Սակայն դա շարունակական պրոցես է, եւ, բացի այդ, զգալով, որ հասարակական պահանջ կա, այնուամենայնիվ, այս անգամ շեշտելով, որ հայտարարությունը վերաբերում է ՀՀ ողջ տարածքին, հայտարարում եմ, որ նրանք, ովքեր մտածում են, թե թաքցնելով, պահելով զենք-զինամթերքը, կսպասեն, իրենց պատկերացումով, լավ ժամանակների եւ հանգիստ կգործածեն դրանք՝ մոլորության մեջ են: Դուք ուրիշ ոստիկանության հետ գործ ունեք հիմա: Հենց ձեր՝ լրատվամիջոցների միջոցով հայտարարում եմ, կոչ անում, որ առաջիկա 2 շաբաթվա ընթացքում բոլոր նրանք, ովքեր կամավոր կհանձնեն զենք-զինամթերքը՝ կազատվեն քրեական պատասխանատվությունից, օրենքով սահմանված կարգով: Դրանից հետո ում մոտ կհայտնաբերվի ապօրինի զենք՝ ոստիկանությունը հետամուտ կլինի, որպեսզի նման անձինք պատժվեն օրենքի ամբողջ խստությամբ:

Իսկ եթե ոմանք հույս են դնում այն բանի վրա, որ երկու շաբաթվա ընթացքում զենքը չհանձնելով՝ կթաքցնեն ինչ-որ տեղ եւ հետո կօգտագործեն կամ ոստիկանների մեջ կգտնեն վհուկներ՝ ոստիկանական ուսադիրներով, եւ նրանց հետ գործարքի կմտնեն ու կփորձեն սարքել, թե՝ «նոր գտան» կամ «կամավոր» են հանձնել, միգուցե նրանց հաջողվի այդ պահին, բայց դա կարճ ժամանակում կբացահայտվի, եւ նույն ոստիկանն ավելի խիստ պատիժ կստանա. հակառակ դեպքում՝ առաջինը քարը նետեք իմ ուղղությամբ: Կպատժվեն բոլոր նրանք, ովքեր մեր հասարակությունում փորձում են զենքի ուժով, զոռբայությամբ եւ լկտիությամբ հարցեր լուծել: Ասել ենք դրա մասին, ասում ենք եւ ասելուց բացի, գործում ենք նույն ոճով: Ոստիկանությունն ունի կամք, ուժ, գիտելիքներ եւ մնացած բոլոր միջոցներն այդ ամենի դեմն առնելու եւ նման երեւույթների դեմ անհանդուրժող լինելու: Այս անգամ Աստծո անունը չեմ տալիս, որպեսզի հասկանաք, որ ոչ միայն աղոթքով է դա բժշկվում...

**– Քրեական պատասխանատվության կենթարկվի՞ Սուրիկ Խաչատրյանը:**

– Կատարվում է քննություն, որը կտա բոլոր հարցերի պատասխանները, սակայն մի բանում համոզված եղեք՝ բոլոր մեղավորները պատասխանատվության կենթարկվեն:

**news.am, 05.06.2013**

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ





# «Ֆրանս-հայկական սրտաբանական կենտրոնը» Գորիսում արդեն գործում է

**2010թ. հոկտեմբերի 16-ին Գորիսում նշվեց «Ֆրանս-հայկական սրտաբանական կենտրոնի» կառուցման աշխատանքների ավարտը: Բուժհաստատության կառուցման նախաձեռնությամբ հանդես էր եկել հիմնադրամի Ֆրանսիայի տեղական մարմինը, Մարսելի «Հայաստան-Ֆրանսիա առողջապահության միությունը» եւ Ֆրանսիայի Բոշ դյու-Ռոն նահանգի վարչակազմը: Ծրագրի նվիրատուներից է նաեւ Լիբանանի վարչապետ Սաադ Հարիրին: Զգալի գումար է հատկացրել ֆրանսահայ բարերար Գրիգոր Շահինյանը՝ կտակի համաձայն: Ծրագրի արժեքը կազմել է ավել քան 432 միլիոն ՀՀ դրամ: Արդեն երեք ամիս է, ինչ սրտաբանական կենտրոնն իր ողջ հնարավորություններով աշխատում է: Արդեն սպասարկել է մոտ 300 հիվանդի, կատարել 10 զոնդավորում եւ 5 ստենդավորում, բուժել սրտանոթային տարբեր հիվանդություններ: Բուժանձնակազմը համալրված է Նորք-Մարաշ սրտաբանական կենտրոնից պարբերաբար ժամանող լավագույն բժիշկ-բուժքույր մասնագետներով, տեղի վերապատրաստված, շնորհալի բուժքույրերով:**
**Քանի որ կենտրոնը դեռ առաջին քայլերն է կատարում տարածաշրջանում եւ մեծ կենսագրություն չունի, ուստի նրա գործադիր տնօրենի հետ հարցազրույցը կներառի բուժհաստատության սոսկ կառուցվածքային եւ նրա առաքելության խնդիրներն ու առաջիկա ծրագրերը:**



– Պարոն Սարգսյան, **փոքրիկ անդրադարձով ներկայացրեք կենտրոնի հիմնադրման պատմությունը, նրա կարեւորության, ընտրության վայրի մասին: Ինչպիսի՞ կառուցվածքային ամբողջականությամբ են այսօր իրականացվում բժշկական աշխատանքները:**

– Սկսեմ նրանից, որ տարածաշրջանում սրտաբանական կենտրոնի բացման կարեւորության մասին առաջինը շեշտել է ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը՝ այցելելով բուժհաստատություն: 2013թ. հունվարի 22-ին տեղի ունեցավ «Հայաստան» համահայկական հիմնադրամի միջոցներով կառուցված «Ֆրանս-հայկական սրտաբանական կենտրոնի» բացումը, որին մասնակցեցին ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը, Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանը, ՀՀ առողջապահության նախարար Դերենիկ Դումանյանը, սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը, ֆրանսահայ բարերարներ: Երկհարկանի բուժհաստատությունում նախատեսված են էխոկարդիոգրաֆիայի, էլեկտրակարդիոգրաֆիայի, ռենտգեն, սթրես-թեստավորման, զոնդավորման, ստենդավորման, վերակենդանացման կաբինետներ, արյան լաբորատորիա, շտապ օգնության սենյակ, ինչպես նաեւ ութ հիվանդասենյակ՝ երկուական մահճակալով: Ֆրանսիական կողմը կենտրոնին տրամադրել է նաեւ շտապ օգնության չորս մեքենա: Բացարձակ խնդիր չունենք ամբուլատոր հիվանդներին զննելու համար՝ նորագույն սարքավորումներով: Հիվանդանոցն ունի կենտրոնական ջեռուցում եւ անհատական ջրամատակարարում, այն կահավորված է արդիական բուժտեխնիկայով եւ սարքավորումներով: Իսկ թե ինչու հիվանդանոցը Գորիսում կառուցվեց, այս հանգամանքը Երեւանի Նորք-Մարաշ հիվանդանոցի սրտի վիրաբույժ Միհր Սուսանին, ով համակարգում էր բուժհաստատության հիմնադրման աշխատանքները, այսպես էր բացատրում. *«Ֆրանսիական կողմը, մասնավորապես «Հայաստան-Ֆրանսիա առողջապահության միության» մասնագետները, ուսումնասիրեցին մարզերի աշխարհագրական դիրքը, բուժսպասարկման հնարավորություններն ու եղանակները եւ հանդես եկան Սյունիքի մարզում սրտաբանական կենտրոն կառուցելու կարեւոր նախաձեռնությամբ: Ընտրվեց Գորիս քաղաքը, քանի որ այն մոտ է մարզի մյուս քաղաքներին եւ Արցախին»:* Թեեւ Գորիսի քաղաքային հիվանդանոցում ներկայումս գործում է սրտաբանական բաժանմունք, մասնագետները որոշեցին, որ սրտի հիվանդությունների առանձնահատկություններից եւ տարածվածությունից ելնելով, անհրաժեշտ է այստեղ ունենալ առանձին մասնագիտացված հաստատություն, որտեղ կիրականացվի սրտի ամբողջական բուժումը: Ըստ սոցիոլոգիական հաշվումների, ասեմ, որ տարածաշրջանում տարեկան 40-50 հոգի սրտի խնդիրներ է ունենում: Մասնագետների բացահայտմամբ՝ սրտի հիվանդությունների եւ հատկապես կաթվածի վտանգի դեպքում զոնդավորում պետք է կատարել առաջին վեց ժամվա ընթացքում: Ուշացումը հիվանդի համար կարող է ճակատագրական լինել: Մինչդեռ, բոլորիս հայտնի է թե՛ մարզի կտրվածությունը մայրաքաղաքից եւ թե՛ ձմռան ամիսներին ճանապարհների հաճախակի անանցանելիությունը:

Նոր պայմաններում հիվանդանոցում հնարավոր է կատարել վեց զոնդավորում եւ սպասարկել 16 ստացիոնար եւ 20 ամբուլատոր հիվանդի: Կարեւորելով կենտրոնի նշանակությունը տարածաշրջանի բնակչության առողջության համար, հատուկ ուշադրություն է դարձվել բուժանձնակազմի ընտրությանը. այստեղ աշխատում են Նորք-Մարաշ բժշկական կենտրոնում վերապատրաստված եւ համապատասխան աշխատանքային փորձառություն ունեցող մասնագետներ: Սպասարկումը պատշաճ որակով եւ արդիական եղանակով իրականացնելու նպատակով հիվանդանոցը համագործակցում է Ֆրանսիայի «Հայաստան-Ֆրանսիա առողջապահության միության» բժիշկների հետ:

**– Վերջերս կենտրոնը կատարեց քառօրյա «Բաց դռների օր» միջոցառում: Դա նրա առաջին լուրջ նախաձեռնությունն էր. ինչպիսի՞ն էր պատկերը տարածաշրջանում՝ սրտանոթային հիվանդությունների, այցելությունների, նաեւ՝ սպասարկման արդյունավետության տեսանկյունից:**

– Այո՛, ապրիլի 19-ից 23-ը մեր նորաբաց հիվանդանոցում կազմակերպվեց «Բաց դռների օր» միջոցառում, որին ներկա էին Սյունիքի մարզպետ Ս.Խաչատրյանը, ԼՂՀ առողջապահության նախարար Զ.Լազարյանը, Ֆրանսիայի Բոշ-դյու-Ռոնի փոխմարզպետ Ք.Մասսը, «Ակցիա առողջություն Հայաստան-Ֆրանսիա» կազմակերպության նախագահ Ա.Մատիկյանը, Վայոց ձորի մարզի եւ ԼՂՀ առողջապահական ոլորտի ներկայացուցիչներ, բուժաշխատողներ: Այդ օրը հիվանդանոցը մարզի տարբեր քաղաքներից ընդունեց 95 հիվանդի: Կատարվեցին հետազոտություններ, զոնդավորումներ եւ ստենդավորումներ, ինչպես նաեւ՝ ամբուլատոր բուժումներ: Կազմակերպվեց շրջայց հիվանդանոցում, հյուրերին ծանոթացրինք հաստատության նորագույն սարքավորումներին: Մի շարք քննարկումների շնորհիվ՝ ամրապնդվեց կենտրոնի հանդեպ վստահությունը, հետագա համագործակցության համար ստեղծվեցին կայուն նախադրյալներ: Հայաստանի, Սփյուռքի, Արցախի սրտաբանների համագործակցության համար խթան հանդիսացավ նաեւ ՀՀ սփյուռքի եւ առողջապահության նախարարությունների, «Ակցիա առողջություն Հայաստան-Ֆրանսիա» կազմակերպության նախաձեռնությամբ կազմակերպած սրտաբանության Եվրակովկասյան երեք համաժողովը: Ընդհանուր առմամբ «Բաց դռների օրը» մեկ անգամ եւս հավաստեց տարածաշրջանում կենտրոնի բացման կարեւորությունը, նրա առաքելությունը՝ սպասարկելու ոչ միայն Սյունիքի ազգաբնակչությանը, այլեւ՝ Արցախի, Վայոց ձորի սրտանոթային խնդիրներ ունեցող մեր հայրենակիցներին: Ուրախալին նաեւ այն է, որ նրանք բարձրակարգ բուժում են ստանալու Ֆրանսիայում որակավորում ստացած, ստենդավորման տեխնիկային տիրապետող հայ եւ ֆրանսիացի մասնագետների կողմից:

**– Պարոն Սարգսյան, բնականաբար, բուժհաստատության սպասարկումներն անմատչելի են լինելու հասարակ քաղաքացու համար: Մինչդեռ, խոսեցինք մարզում սրտանոթային հիվանդությունների վտանգավոր աճի մասին: Շատերին**

Շարունակությունը՝ էջ 6

«Նկատեցինք, որ երբ Գորիս սրտեն հիվանդ մեկը ըլլա մինչեւ կառք մը (ավտոմեքենա) առնե հիվանդանոց երթալու, ժամեր կանցնեն ու ժամանակ ունի մեռնելու: Ատոր համար պետք եղավ այստեղ կառուցել: Չափեն ավելի աղվոր է այս հիվանդանոցը: Չեմ տեսած նման հիվանդանոց Մարսել ալ՝ այսպես մաքուր, ամեն ինչ լավ: Բժիշկները Երեւանեն ու Ֆրանսայեն ալ պետք է գան եւ մեկ ամիս հոս աշխատեն: Աղվոր կառույց, որի կառուցման ծախսերը կազմել են մեկ միլիոն ԱՄՆ դոլար»:
**Լեւոն Չոլաքյան**
**Հիվանդանոցի բարերար, «Հարավային Ֆրանսիա» հիմնադրամի նախագահ**

## ԱՅՑԵՔԱՐՏ

**ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ.** ծնվել է 1958 թվականին, Երեւանում: Սովորել է N129 միջնակարգ դպրոցում, այնուհետ՝ ժողովրդական տնտեսության ինստիտուտում: 1980-82թթ. ծառայել է խորհրդային բանակում: Աշխատել է Երեւանի մանկավարժական ինստիտուտում, առողջապահության նախարարությունում, «Արմենիա» բժշկական կենտրոնում (փոխտնօրեն՝ տնտեսական գծով), 2012թ.՝«Կոնվերս» բանկում: 2012 թվականից Գորիսի «Ֆրանս-հայկական սրտաբանական կենտրոնի» գործադիր տնօրենն է:

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ ■ ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ՝ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ
ՇԱԲԱԹ ● 8 ՀՈՒՆԻՍԻ 2013Թ ● № 15 (288)

# ԲԱՐՁՐԱՁԱՅՆ ՄԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

«Կրթությունն ամեն ինչ է, անգրագիտությունը մեծագույն չարիք է»

***Մովսես Խորենացի***



**ՍԵԴԱ ՍԱՐԴԱՐՅԱՆ**

***Սյունիքի տարածաշրջանային պետական քոլեջի մեթոդիստ ուսուցչուհի***

Պարզ է՝ Խորենացին «գրագետ» բառը չի ըմբռնել տառացիորեն՝ գրաճանաչության իմացության առումով: Խոսքը, այսօրվա արտահայտությամբ, արհեստավարժության, հմուտ եւ կատարյալ մասնագիտացման, պրոֆեսիոնալիզմի մասին է: Պատմահայրը թվարկում է հայ իրականության բոլոր վճռորոշ բնագավառները եւ ողբում, երբ հայորդիները դավաճանում են իրենց կոչմանը՝ նախարարը, հոգեւորականը, զինվորականը, դատավորը, ուսուցիչը, սովորողը…

Վիլյամ Սարոյանը մեր ժամանակներում Չարենցին, Հր.Մաթեւոսյանին «մեծ գրագետ» էր համարում՝ շնորհաշատությունը, գրողական լայնածավալ օժտվածությունը գնահատելու համար: «Ան մեծ գրագետ մըն է», — ասել է Մաթեւոսյանի մասին «Մենք ենք մեր սարերը» ֆիլմը դիտելուց հետո:

Անշուշտ, ես Խորենացի, Չարենց, Սարոյան եւ Մաթեւոսյան չեմ, բայց քաջ գիտեմ արդի Հայաստանի կրթության համապարփակ դաշտը՝ նախակրթարանից մինչեւ բուհական ուսուցում, քանի որ տասնամյակներ դասավանդել եմ միջնակարգ եւ ավագ դպրոցներում, բուհի նախապատրաստական ֆակուլտետում, իսկ վերջին տասնամյակում Սյունիքի տարածաշրջանային պետական քոլեջում մանկավարժական կադրեր եմ պատրաստում նախակրթարանի եւ կրտսեր դպրոցի համար:

Դարերով մեր ազգային կերտվածքի առանձնահատկություններից են բարեկրթությունը, բազմակողմանի զարգացման բաղձանքը, կրթությունն ուժ եւ հենակետ ընդունելը: Այսօր բարձրակիրթ մտավորականության՝ համաժողովրդական սեր եւ հարգանք վայելող մեծ սերուցք չունենք, փոխարինող արժանավոր երիտասարդ մասնագետների հզոր բանակ էլ չենք տեսնում հրապարակում: Առհասարակ մտավորականներն ազգային արժանապատվության կրողներն են եւ մշակույթի ձեւավորողները, ինչպես նաեւ՝ փոխանցողները: Մերօրյա Հայաստանում մտավորականի կերպարն ինչ-որ տեղ նսեմացված է, երբ հենց մտավորականությունն է կոչված ձեւավորելու արժեքային համակարգ՝ հայրենասիրություն, մարդասիրություն, օրենքի հավասարություն:

Միշտ էլ կյանքում հերոսանալու տեղ կա, Այվազովսկու, Սարոյանի, Ազնավուրի պես հայ եւ համաշխարհային քաղաքակրթության մեջ բացահայտվելու, հանճարեղության էտալոն դառնալու հնարավորություն կա: Հայությունը շիրազանալու, անդրանիկվելու, Նժդեհի, Վիկտոր Համբարձումյանի, Արամ Խաչատրյանի, Վահրամ Փափազյանի, Գոհար Գասպարյանի, Արմեն Ջիգարխանյանի եւ այլ փառապանծ զավակների անհրաժեշտությունն ու պահանջներն ունի բոլոր ոլորտներում:

Հայկական կենսափիլիսոփայության, մտահայեցողության լույսը կրող հանճարների արթնացումն ու բռնկումը դանդաղում են, ինչո՞ւ պետք է մեր տիգրաններին, մաշտոցներին, նարեկացիներին միայն հեռավոր անցյալներում որոնենք:

Երկրի վաղվա դեմքը որոշում են կրթօջախն ու կրթողը, կարեւոր չեն ուսումնառության մեթոդները՝ մոդուլային, կրեդիտային, հեռակառավարման-համակարգչային…

Անկախության, ազատության ինքնորոշումը կրթության կապիտալի մեր պոտենցիալի հարուստ հնարավորությունները ճիշտ հայտնաբերելու, ձեւավորելու, տեղաբաշխելու, կիրառելու լայն հեռանկարներ է բացել հայության համար: Բայց մենք ճի՞շտ ենք օգտագործում մեզ ընձեռված առկա շանսերը: Մեր գործընթացում գիտելիքների հաղորդման եւ ուսումնառության մակերեսայնությունն անթույլատրելի է:

Եթե սերունդը խորագետ չէ, նպատակասլաց, վտանգվում է ազգի ապագան՝ հասցնելով ոգու սովի, երկնային ամենակուլ սեւ խոռոչների նման աղետների, կաթվածահար լինելու վտանգներ պարունակում իր մեջ: Հայեցի կրթության ակունքները թափոններից ազատել է պետք, վարար ու զուլալ հոսքային աճը խնամքով հասունացնելու կարիք կա, կրթության եւ մտավորականության վարկանիշը բարձրացնել է պետք: Կրթությունն ամեն ինչ է՝ պետական քաղաքականության եւ ազգապահպանության համատեղելիության ճիշտ եւ անսխալ ուղղորդման առկայության դեպքում, երբ կրթության պահանջմունքը չի ձեւախեղվում, երբ հանրությունը նոր լծակներ պահանջելով դառնում է խիստ պահանջկոտ:

Անկրթությունը հասցնում է ստրկահաճոյության, անդիմության, անհեթեթ , խավարամիտ կենսակերպության, մոլորուն, անկայուն, անհիմն հայեցակետերի, անուժ եւ անհորիզոն գոյատեւության, անարեգակ եւ կենարար անձրեւ չերկնող գորշ թխպամածության ու տխմար, բայց դաժան ու վրիժառու խոժոռության, տատասկոտ ստերջության եւ անպտղության, զեխության, փորի եւ փողի ծառան ու ստրուկը դարձած խամաճիկների առկայության:

Եթե վարորդն ու բժիշկն արհեստավարժ չեն, գերեզմանների ճամփաներն են մարդաշատ դառնում: Վատ՝ ծախու իրավաբանն արդարության դռներն է փակում մասսաների առաջ եւ խոտոր ուղիներ բացում անիրավության քողարկման համար: Անճաշակ վարսահարդարն ու դիմահարդարը տգեղացնում են հմայիչ կնոջը եւ մարդկային մտքի էպիկենտրոն գլուխն ու դեմքը: Անսեր, անմիաբան, տգետ ընտանիքը հասարակության առողջ բեղմնավորումը կասեցնող մահացած բջիջ է: Մանր մտավորականները «մեծապատիվ մուրացկաններ» են՝ անղեկ, անկառավար, մարդկային նեղ գործելակերպի գորշ եւ անազդու ուրվականներ: Անսկզբունք, գաղափարազուրկ, ապիկար, քծնող, շողոքորթող խղճուկ հա՛յ քաղաքացին կործանման, ուծացման եզրին է կանգնած՝ անդունդի պռնկին՝ վաղվա օրվա ահասարսուռ վախով, անշեղ դեգրադացիայի ցուրտ քրտինքով պատված:

Բերեմ միայն մի փաստ: Ծնողն իր զավակի բուհական կրթության համար տարեկան միջին հաշվով վճարում է մոտ 500 հազար դրամ (չհաշված սոցիալական մյուս ծախսերը եւս), բայց նույն զավակը լիակատար կրթության ավարտից հետո ընտրած մասնագիտությամբ աշխատելիս նվազագույն աշխատավարձի չափորոշիչներով տարեկան վաստակում է 400 հազար դրամ: Մի՞թե բանական է սա, մի՞թե կեցությունը չի որոշում գիտակցությունը: Մի՞թե իրեն հարգող երիտասարդ մասնագետը չի բռնելու արտերկրի ճանապարհը՝ բարձր վարձատրվելու ակնկալությամբ: Կամ լքում է իր սիրած մասնագիտությունն անվերադարձ եւ նախընտրում շահութաբեր գործարարությունը: Որոշներն էլ, ինչպես ցուցամոլ մոդայամոլները, ովքեր ականջների բլթակներին եւ այլուր կրում են բազում օղեր կամ մարմնի տարբեր մասերին խարանում կամ դաջում են խայտանկարներ, գերադասում են մի քանի դիպլոմ ունենալ, անվերջ ուսանողի կարգավիճակում լինել, գուցե պե՞տք կգա հայկական աշխատանքային շուկայում:

Կրթությունը ձեւ չէ, մոդա չէ: Կրթությունն արմատ է, ոգի եւ էություն:

Մտավորականը կարկամած է, բանվորը՝ դառնացած, գյուղացին՝ անօգ եւ արհամարհված: Դրանից էլ բարին օրավուր պակասում է մեզանում, մարդասիրությունը վերածվում է անցյալ դարերի բարոյական ժառանգության: Չարի դեմ մարտնչելը տարօրինակ վայրիվերում է որակվում: Ազատասերը, ազնիվը կրողը տպավորվում են ուղեմոլոր նավակ՝ գիշերային ալեկոծ մղձավանջում:

Հրատապորեն պետք է ի մի բերենք մեր ներքին, առաքինի կրթության ներուժը՝ հանուն արժանապատիվ ապրելակերպի, հզոր ապագայի տեսլականի: Եսակենտրոնությունը պետք է խարազանվի համընդհանուրին նվիրվածությունն առաջատար ընդունվելու նախապայմանով: Ոչ մի պահ չպետք է մոռանալ Դանիել Վարուժանի կտակը. «Հայ մարդը ձեռքից ցած չպետք է դնի բահը, զենքը, գրիչը»: Անտարբերությունը չպետք է մուտք գործի կրթօջախները, աշակերտը եւ ուսանողը չպետք է հեռանան արարումից, սեփական եսը եւ ճակատագիրը կոփելուց ու կռելուց, նրանց պետք է գրավեն մտքի բոցավառումները եւ հրաբխումները: Ուսումնառությունը պետք է ենթադրի գիտելիքի ծովացում, արթնացնի հայտնաբերման եւ ճանաչման վայելք, դառնա հոգեկան ամբողջացման երաշխիք, տիրակալություն:

Միշտ էլ առաջնորդող է հնագույն այս ասացվածքը. «Երեխայի ուղեղը ոչ թե անոթ է, որ պետք է խցկել, այլ ջահ է, որ պետք է բոցավառել»:

Այսօր մտքի այս բոցավառման, փայլատակման կարիքն ունի մեր ողջ հանրապետությունը, իսկ դրա համար համընդհանուր, ազգովին համալիր մոտեցման պահանջմունք պետք է աճեցնել բոլոր շրջահայաց , խոհեմ եւ կենսունակ արժեւորողներին համախմբելով՝ գերատեսչություն, կրթող, կրթվող, ծնող: Ծրագիր, դասագիրք, մեթոդական գրականություն պետք է թարմացվեն, արդիական շնչով կահավորած կրթօջախները, առաջավոր, արդյունավետ փորձի ներդրումը, որակավորման բարձրացմանը նպաստող դասընթացները, չմոռանանք նաեւ ուսուցանողի արժանապատիվ աշխատավարձը, ատեստավորումը իսկապես կստեղծեն աշակերտակենտրոն եւ ուսանողակենտրոն ուսումնական հաստատություններ: Այս դեպքում միայն կարող ենք սովորել սովորեցնել եւ հավատալ, որ մեր ապագան վստահելի ձեռքերում է, իսկ Հայաստանը՝ գիտության, տնտեսության եւ արվեստի զարգացած երկիր, որ նպատակաուղղված իրագործում է բարգավաճման, օրինապահության երկրի անշեղ առաջընթացը:

Կախյալ քաղաքացին պետք է դառնա ինքնավստահ ձեռներեց, ամեն ինչ՝ կացությունը եւ կեցությունը, իր մտքով եւ ձեռքով նախաձեռնող, հպարտանա եւ ոգեշնչվի իր եւ երկրի ձեռքբերումներով: Անշուշտ, կայունացնել է պետք համազգային ազատ տնտեսությունը, վերացնել արտագաղթը, բոլոր գյուղերը դարձնել դպրության եւ զարգացած տնտեսության կենտրոններ, որպեսզի նաեւ սփյուռքահայության համատարած ներգաղթ գրանցվի դեպի բարեշեն ու ծաղկուն մայր հայրենիքը: Ժամանակին Միքայել Նալբանդյանը զգուշացրել է. «Ստրկության մեջ, աղքատության մեջ չկա եւ չի կարող լինել լուսավորություն»:

Իսկ Վիլյամ Սարոյանը հայերին եւ Հայաստանին ուղղել է այս պատվիրանները.

*«Մա՛հ, մի՛ գնա դեպի իմ երկիրը:*

*Շատ ցավ մի՛ պատճառեք ծնողներին:*

*Երեխաներին մի՛ հեռացրեք ընտանիքից»:*

*Կրթությունն ամեն ինչ է: Նարեկացին էր գովաբանում անձանձիր կրթությունը. «Միշտ ուսանիմ եւ երբեք ի ճշմարտություն գիտության ոչ հասանիմ»:*

Ազգային անաղարտ դիմանկարի բյուրեղացած գծերը պահպանենք եւ ընդգծենք այսօր, ինչո՞ւ պետք է արտակարգ լարման գերագույն պահի հիշենք այդ մասին: Մասիսացած իդեալների ի կատար ածման պահն հենց այսօր է: Բարոյական է հայրենիքին սիրահարված եւ հայրենիքում սիրով ապրելը եւ սիրուն սիրահարված լինելը:

«Սերը գոյության հանճարն է միակ»: Սերը հասցնում է ուղղափառության եւ փակում չարափառության մուտքը:

Կրթությունն ամեն ինչ է՝ արեւոտ կապույտ երկինք, քարաժայռոտ հիմքով տուն եւ բերդապարիսպ, սերնդաշար առողջ գոյավիճակ, դեպի կայծկլտուն հրավառությամբ վերելք ու հաղթանակ: Ոչ ոքի իրավունք չի տրված մյուսին բարձրից նայելու, իսկ եթե ստիպված ես նայելու, ապա միայն օգնելու՝ բարձրանալ: Կրթությունն օգնում է, որ մեր հայրենիքը դառնա բարյացակամության եւ բարօրության երկիր: Հայկազուններին ուզում եմ տեսնել քաղցր աչքերի հանդարտությամբ, զվարթ շրթունքների ժպիտով, բեղմնավոր մտքով եւ կենսագործունեությամբ, բարի հիշատակների պահպանությամբ եւ մեծարմամբ: ■

# «Ֆրանս-հայկական սրտաբանական կենտրոնը» Գորիսում արդեն գործում է

## ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

**Սկիզբը՝ էջ 5**

**կիետաքրքրի ծառայությունների մոտավոր արժեքը… Նախատեսվա՞ծ են, արդյոք, զեղչեր, պետպատվերներ, առանց որոնց, խոստովանենք, հաստատությունը սոսկ բիզնեսձեռնարկության տպավորություն կթողնի, որի առաքելությունը կսահմանափակվի սոսկ ազգի հարուստ խավին սպասարկելով: Ինչպիսի՞ք են կենտրոնի առաջիկա ծրագրերը: Ձեր խոսքը՝ տարածաշրջանի ազգաբնակչությանը:**

— Ցավոք, տարածաշրջանում, իրոք, մեծ տոկոս են կազմում սրտանոթային հիվանդությունները, եւ այս առումով չափազանց կարեւոր էր սրտաբանական կենտրոնի բացումը: Մյուս կողմից էլ՝ այսօրվա անմատչելի բժշկական ծառայությունները եւ ազգաբնակչության անվճարունակությունը: Իհարկե, բոլորը չեն կարող այս կամ այն գործարար անհատի կամ կազմակերպության հովանավորությամբ տարաբնույթ բուժումներ ստանալ: Ավելին, երեւի մեկ տոկոսին հազիվ թե դա հաջողվի: Մեր երկիրն էլ դեռ այնքան զարգացած չէ, որ տարբեր ապահովագրություններով օգնի անապահով խավին: Հույս ունենանք, որ այսպես չի մնա: Ինչ վերաբերում է ծառայությունների գներին, դրանք ամրագրված-փակցված են մեր միջանցքի պատի վահանակների վրա. ամբուլատոր հետազոտությունը շուրջ 15 հազար դրամ է արժենում, զոնդավորումը՝ 260 հազար, իսկ ստենդավորումը՝ 1,5-2,2 միլիոն ՀՀ դրամ: Վերջիններիս դեպքում կենտրոնը դեղորայքը տրամադրում է անվճար: Առայժմ զեղչեր, պետպատվերներ չունենք: Առաջիկա մեր ծրագրերի մեջ են մտնում նաեւ այս հարցերը: Իսկ ընդհանրապես, առաջիկա տարիներին կենտրոնը կընդլայնի իր տարածքն ու գործունեությունը՝ իրականացնելով նաեւ սրտի վիրահատություններ: Այստեղ կմշակվեն անոթային վիրաբուժության հետ կապված բուժման նոր եղանակներ: Արդեն իսկ հրատապ է տեղական կադրերի պատրաստման խնդիրը. մշտապես Նորք-Մարաշի սրտաբանական հիվանդանոցի կադրերով հնարավոր չէ կայուն գործունեություն ունենալ:

Մեր ամենամեծ ձգտումը որակյալ եւ արդյունավետ սպասարկման շնորհիվ ճանաչում եւ հեղինակություն ձեռք բերելն է ոչ միայն Հայաստանում, այլեւ՝ նրա սահմաններից դուրս: Տարածաշրջանի ազգաբնակչությանն ուզում եմ շնորհավորել, հիրավի, այսպիսի անհրաժեշտ եւ բարձրակարգ բուժհաստատություն ունենալու համար: Ոչ ոք լրջորեն չի հիվանդանա, եթե ժամանակ առ ժամանակ հետազոտվի, հարկ եղած դեպքում ամբուլատոր բուժումներ ստանա եւ այդպիսով՝ կանխարգելի հետագայում բարդացող հիվանդությունը: Ամենակարեւորը. մարդիկ պետք է առողջ ապրելակերպ վարեն, իրենց զերծ պահեն բացասական սթրեսներից, ավելորդ հուզական ծանրաբեռնվածությունից, ալկոհոլից, ծխախոտից. առանց այն էլ՝ բարձր լեռնային գոտին սրտանոթային հիվանդությունների համար տեղով մեկ բարենպաստ չէ:

**Հարցազրույցը՝ ՍՈՒՍԱՆՆԱ ԲԱԲԱՋԱՆՅԱՆԻ**

# ԱՐԱՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ. «Այս պահի դրությամբ Սյունիքի մարզից չունենք որեւէ փորձաքննական պրոցես»

**Սյունիքի մարզում 8,2 միլիոն եվրոյի շրջանակներում խոշորածավալ ծրագիր ենք սկսել իրականացնել, որը վերաբերում է կենսոլորտային փարածքներ սփեղծելուն: Այս մասին լրագրողների հետ զրույցում ասաց ՀՀ բնապահպանության նախարար Արամ Հարությունյանը՝ անդրադառնալով 14 հանքի շահագործման հետ կապված Մեղրիում մեկնարկած սփորագրահավաքին:**


ՖՈՏՈԼՈՒՐ

Նախարարը նշեց, որ դրանք այն տարածքներն են, որտեղ իրենք պետք է կարողանան լուծումներ գտնել եւ հնարավոր դարձնել ապրելը, տարածքին բնորոշ գործունեությամբ զբաղվելը: «Այդ ուղղվածությունները լինելու են բնապահպանական, եւ այդ ծրագիրը կյանքի է կոչվելու, ինչպես նաեւ սոցիալտնտեսական ծրագրերը, այսինքն՝ տվյալ կլիմային համապատասխան գործունեություն են ծավալելու»,- նշեց նա:

Ինչ վերաբերում է բնապահպանների մտավախություններին, թե հանքարդյունաբերությունը կվնասի գյուղատնտեսությանը, ապա նախարարը նշեց, որ իրենց ամենակարեւոր խնդիրն այն է, որ կարողանան նվազագույնի հասցնել կամ իսպառ բացառել այն վնասները, որոնք կլինեն հանքարդյունաբերության արդյունքում: **«Մենք ոչ թե խթանում ենք հանքարդյունաբերության գործունեությունը, մեր գործառույթը կայանում է նրանում, որ կարողանանք խթանել տվյալ տարածքին հարիր գործունեությամբ զբաղվելը՝ գյուղատնտեսություն, մեղվապահություն, էկոլոգիական ապրանքներ, որոնք մեծ պահանջարկ ունեն»,** – նշեց նախարարը:

Արամ Հարությունյանը նաեւ տեղեկացրեց, որ այս պահի դրությամբ Սյունիքի մարզից չունեն որեւէ փորձաքննական պրոցես, այդ 14 հանքավայրը եւս փորձաքննական պրոցեսի մեջ չէ, իսկ մինչ փորձաքննական պրոցեսները կան ուսումնասիրության, լանդշաֆտների եւ այլ խնդիրներ: Նա վստահեցրեց, որ կիրականացվի անաչառ փորձաքննություն՝ ներգրավելով նաեւ անկախ փորձագետներին:

**news.am, 06.05.2013**

# «Սյունիքի մարզպետարանը դուրս է եկել իր լիազորությունների շրջանակից»

## ԱՐՁԱԳԱՆՔ

Սկիզբը՝ էջ 2

**վի:**

– Ոչ: Դրանք կիրապարակվեն դատաքննության ընթացքում. նկատի ունենալով, որ դատաքննությունը դռնբաց է, եթե, իհարկե, դատարանն այլ որոշում չկայացնի, բնականաբար, այս ապացույցը եւս (քանի որ տեսագրությունը եւս ապացույց է), կհետազոտվի դռնբաց դատական նիստի ընթացքում:

**– Եվ մի վերջին հարց, որը նույնպես թեմային առնչվում է: Երեկվա Ձեր ասուլիսին խիստ սահմանափակ թվով լրատվամիջոցներ էին ներկայացված: Ինչո՞վ էր պայմանավորված նման ընտրությունը:**

– Ընտրությունը շատ օբյեկտիվ էր եւ պայմանավորված էր ընդամենը մեկ փաստով. հրավիրվել են բացառապես հեռուստաընկերությունները: Որեւէ էլեկտրոնային լրատվամիջոց հրավիրված չէր (համացանցային ԼՄ-ներից մեկն օնլայն ռեժիմով հաղորդագրություններ էր տարածում ասուլիսի ընթացքի վերաբերյալ- Հ.Կ): Սկզբունքն այն է եղել, որ ասուլիսն անցկացվի միայն հեռուստաընկերությունների մասնակցությամբ, ընդ որում, եթե նկատեցիք, նշանակություն չուներ՝ այդ հեռուստաընկերությունը, այսպես կոչված, իշխանական, թե ընդդիմադիր հակումներ ունի: Այսինքն, կողմնապահություն չի եղել:

**Զրուցեց՝ Հակոբ Կարապետյանը**
**Ilur.am**

# Գորիս. հոգեցունց միջադեպ, սպասումներ

## ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Սկիզբը՝ էջ 1

պետական քաղաքականությունը, թե որքանով կշարունակվի Սյունիքը միայն հանքահումքային բազա ու մի քանի հոգու կալվածք դիտելու գործելակերպը՝ կերեւա նաեւ այն բանից, թե ում են նշանակում Սյունիքի տարածքային իշխանության հերթական ղեկավար: Այո, նոր մարզպետի նշանակումն այն բարոմետրն է, որ պարզորոշ, հստակ ցույց կտա վերջնականապես, թե Սյունիք ասելով ինչ է հասկանում նախագահ Սերժ Սարգսյանը (թեեւ բազում անգամ՝ կոնկրետ քայլերով, նա արդեն ցույց է տվել, թե իր համար ինչ ասել է Սյունիք): Մեզ ապշեցնում է նաեւ այս օրերին թեւածող ճենճերահոտ պրոպագանդան, թե իբր Սյունիքը կառավարելու համար ուժեղ ձեռք է պետք, «պագոնավոր» է պետք, կշտացած բիրդանաղա է պետք… Հավատացեք, դա մեծագույն մոլորություն է եւ ոչ պակաս մեծագույն վիրավորանք այստեղ ապրողներիս համար: Հավատացեք, Սյունիքը Հայաստանի ամենամտավորական, ամենաաշխատասեր, ամենաօրինապահ, ամենապետականամետ, քրիստոնեական ու ազգային արժեքներով առավելագույնս առաջնորդվող տարածքներից է: Սյունիքում խորշում են «ուժեղ ձեռք» ասվածից, Սյունիքում խորշում են լժե պագոնավորներից, Սյունիքում զզվում են բիրդանաղաներից ու նրանց լակեյներից եւ ճորտության մյուս սերմնացաններից: Սյունիքին հարկավոր է տարածքի հիմնախնդիրներն իմացող ու տարածքի մարդկանց ճանաչող, ազնիվ, մտավորական, բարեխիղճ, անձնական շահը պետական շահին ստորադասող, կլանային-թայֆայական հարաբերություններից ու կապանքներից զերծ, մեր ազգային ունեցվածքի ասպատակությանը չմասնակցած անձնավորություն: Ինչ վերաբերում է Գորիսում եւ Գորիսից դուրս շրջանառվող հարցին՝ կունենա՞ արդյոք այս ողբերգությունը շարունակություն, կհանդիսանա՞ արդյոք այս ողբերգությունը վենդետայի սկիզբ, ապա դրա պատասխանը (համոզված ենք) բացառապես կախված է արդարադատության օբյեկտիվ ընթացքից եւ, իհարկե, բոլորիս եւ յուրաքանչյուրիս ողջամիտ, զսպված, չափավորված պահվածքից:

Մի բան էլ՝ տեղի ունեցածի շուրջ կրքերը շատ թե քիչ կհանդարտվեին, ասեկոսեները նվազագույնի կհասնեին, անպատասխան հարցերը կպակասեին, եթե մեր հայրենի կառավարությունը միջադեպից ժամեր անց հավաքվեր ու արտահերթության կարգով քննարկեր Գորիսում ստեղծված իրավիճակը (որոշ մարտնչող տգետներ, հատկապես մայրաքաղաքային եթերից, քարոզում են՝ քանի դեռ նախաքննություն է՝ կառավարությունը չի կարող գնահատական տալ տեղի ունեցածին, իսկ մենք ասում ենք՝ կառավարությունը պետք է գնահատական տա ոչ թե կոնկրետ այդ ողբերգական դեպքին (դա, իսկապես, նախաքննական մարմնի խնդիրն է), այլ արտառոց երեւույթին ու երեւույթը ծնող պատճառներին): Մի քիչ էլ հստակ ու ոչ երկիմաստ պետք է լինեին իրավապահ մարմինների կողմից տարածվող պաշտոնական տեղեկությունները: Տպավորություն ունենք, որ մեկ-երկու կայք՝ իրենց կիսագրագետ տեքստերով, ավելի քաջատեղյակ են երկրի անցուդարձին, քան պետական բազմաթիվ ատյանների լրատվական ծառայություններն ու պաշտոնական լրատվամիջոցները միասին վերցրած:

«Սյունյաց երկիրը» վշտակցում է Բուդաղյանների ընտանիքին՝ Ավետիք Բուդաղյանի ողբերգական մահվան կապակցությամբ:

**ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**
**4 հունիսի 2013թ.**

# Էլեոնորա Սողոմոնի Կարապետյան

## ՎԱՍՏԱԿԱՎՈՐ ՈՒՍՈՒՑՉՈՒՀԻՆ



Հավանաբար քչերին է հաջողվում հավատարիմ մնալով իր դավանած սկզբունքին՝ անմնացորդ նվիրվել ընտրած մասնագիտությանը եւ արժանանալ թե՛ սաների, թե՛ կոլեկտիվի եւ թե՛ հասարակության սիրուն ու հարգանքին, ըստ արժանվույն գնահատվել կառավարության կողմից:

Այդպիսին էր ՀԽՍՀ վաստակավոր ուսուցիչ, երաժշտական կրթության մեծ երախտավոր, Կապանի երաժշտական դպրոցի առաջին ուսուցչուհի, դաշնակահար Էլեոնորա Սողոմոնի Կարապետյանը:

Ծնվել է Գորիսում 1930թ.: Շուտով ընտանիքը տեղափոխվել է Երեւան, եւ Է.Կարապետյանն ընդունվել է Ալ.Սպենդիարյանի անվան երաժշտական դպրոցը, այնուհետեւ սովորել եւ ավարտել է Երեւանի Ռ.Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանի դաշնամուրային բաժինը՝ ուսանելով պրոֆեսոր Ռոբերտ Անդրեասյանին:

1952թ. հոկտեմբերյան մի օր Երեւանի Ռոմանոս Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանի շրջանավարտ Էլեոնորա Կարապետյանը գործուղվում է Կապան՝ աշխատելու երաժշտական դպրոցում: Ի զարմանս մայրաքաղաքից եկած երիտասարդուհու՝ Կապանում դպրոց չտեսավ եւ նոր միայն հասկացավ, թե ինչ առաքելությամբ է հայտնվել Կապանում: Նա պետք է ներկայանար քաղաքի ղեկավարությանը, եւ միասին հիմնեին երաժշտական դպրոց: Երեւի թե բախտը ժպտաց Էլեոնորային, երբ մի քանի օր անց Կապան ժամանեց Երեւանի պետական կոնսերվատորիայի շրջանավարտ, ուսանողական տարիներին արդեն ճանաչված երաժիշտ, փողային գործիքների մեծ գիտակ Թորոս Լավչյանը: Երկուսով ծեռնամուխ եղան դպրոցի ստեղծմանը: Դպրոցն իրենից ներկայացնում էր ընդամենը 2-3 սենյակ պղնձահանքային կոմբինատի մսուր-մանկապարտեզի շենքի առաջին հարկում, որի միակ դաշնամուրը բերվել էր Գեղանուշ գյուղի որբանոցից, կարելի է ասել՝ որբանոցի տնօրեն Ավիս Էլչյանի նվերն էր: Համառ եւ քրտնաջան աշխատանքը տվեց իր արդյունքը: Դպրոցի գոյության 2-րդ տարում սաները հաշվետու համերգով հանդես եկան մայրաքաղաքի խստապահանջ հասարակության առջեւ եւ արժանացան բարձր գնահատականի: Դա արդեն հաղթանակ էր: Իսկ ուսուցչուհին օրավուր ավելի էր հմտանում իր դժվարին, բայց շնորհակալ աշխատանքում: Եթե նշենք, որ առաջին տարում դպրոց ընդունվեց 48 սան, ովքեր գործիք չունեին, եւ դասապատրաստումը կայանում էր դպրոցում, կհասկանանք, թե ինչպիսի հսկայածավալ աշխատանք էին տանում դպրոցի տնօրեն Թ.Լավչյանը եւ Է.Կարապետյանը: Կապանցի չէր Է.Կարապետյանը, բայց եկած օրվանից այնպես կապվեց մեր հող ու ջրին, այնպես նվիրվեց իր աշխատանքին ու սաներին, որ դժվար էր հավատալ, որ նա կապանցի չէր: Շուտով ամուսնացավ Կապանի լավագույն երիտասարդներից մեկի՝ Իգնատ Վարդանյանի հետ ու ստեղծեց մի ամուր ընտանիք, որն ավելի երջանկացավ որդու՝ Սողոմոնի ծնվելուց հետո: Չբավարարվելով ստացած կրթությամբ՝ Է.Կարապետյանն ընդունվեց Երեւանի պետական կոնսերվատորիայի դաշնամուրային բաժինը, համատեղելով ուսումն աշխատանքի հետ: Է.Կարապետյանը ստեղծեց դաշնամուրային մի ուրույն դպրոց եւ դաստիարակեց մի ամբողջ սերունդ, ով պետք է շարունակեր իր սկսած աշխատանքը: Այսօր Է.Կարապետյանի սաները զարդարում են ոչ միայն մեր քաղաքի, այլեւ մայրաքաղաքի եւ տարբեր երկրների ուսումնական հաստատություններն ու բեմահարթակները: Մեծ է, շատ մեծ է Է.Կարապետյանի վաստակը մատաղ սերնդի գեղագիտական դաստիարակության գործում, եւ պատահական չէ, որ աշխատանքային գործունեության 15-րդ տարում՝ 1967թ. հոկտեմբերին, կառավարությունն ուսուցչի օրվա կապակցությամբ Է.Կարապետյանին արժանացրեց ՀԽՍՀ վաստակավոր ուսուցչի պատվավոր կոչման: 1982թ. դպրոցում կազմակերպվեց միջոցառում նվիրված վաստակավոր ուսուցիչ Է.Կարապետյանի աշխատանքային գործունեության 30-ամյակին, ինչը շատ ուրախացրեց նրան, եւ այդ օրը բեմահարթակ էին բարձրանում մեկը մյուսի հետեւից թե՛ իր աշակերտները, ովքեր դեռ սովորում էին դպրոցում, եւ թե՛ այն շրջանավարտները, ովքեր վաղուց արդեն ճանաչված երաժիշտներ էին՝ Սվետլանա Կոստանյանը, Սվետլանա Նահապետյանը, Դավիթ Հարությունյանը, Անահիտ Կարախանյանը… Երբ պետք է կենսաթոշակի անցներ, դպրոցում կազմակերպվեց հրաժեշտի երեկո (գիտեինք, որ կենսաթոշակի անցնելուց հետո որդու հետ պիտի գնար Երեւան), եւ կարծես այդ օրը մենք զրկվեցինք մեր նեցուկից, մեր ուսուցչից ու խորհրդատուից: Զրկվեցինք այն ժամանակ, երբ նրա կարիքն ավելի շատ էինք զգում:

Կենսաթոշակի անցնելուց հետո Է.Կարապետյանը բնակվում էր Երեւանում եւ ամեն մի փառատոնի կամ մրցույթի ժամանակ, որ տեղի էր ունենում այնտեղ, մեզ հետ էր մեր ուսուցիչը: Մեծ սիրով ու կարոտով էր հանդիպում մեզ, հուզվում աշակերտների հաջողությամբ, ապացուցելով, որ ապրում է դպրոցի կյանքով եւ որ միշտ սպասում է լավագույն ելույթների, վստահ լինելով, որ իր տված գիտելիքները դեռ երկար ժամանակ կստիպեն ունկնդիրներին բուռն ծափահարություններով ողջունել իր սաներին: Դա ապացույցն է այն բանի, որ իր աշխատանքն իզուր չի եղել, ավելին, այն շարունակում է ապրել իր իսկ կրթած սերունդների մեջ: Այսօր, երբ տոնվում է մեր սիրելի դպրոցի 60-ամյա հոբելյանը, նա մեզ հետ չէ, եւ դժվար է հավատալ, որ մեզ հետ չէ բոլորիս կողմից սիրված, հարգված առաջին ուսուցիչը, առաջինը, ով մեր երեխաներին հաղորդակից դարձրեց դասական երաժշտությանը, եւ ոչ միայն երեխաներին: Երջանկահիշատակ է Է.Կարապետյանը, նա մեզ թողել է երաժշտության մի մեծ աշխարհ, հուշե՜ր, հուշե՜ր, որոնք միշտ մեզ հետ են, հուշեր, որոնք կարոտի չափ հարազատ են մեզ՝ սաներիս:

**Ռուզան Ավանեսյան**
**Ա.Խաչատրյանի անվան երաժշտական դպրոցի նախկին տնօրեն**

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ ■ ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ՝ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ
ՇԱԲԱԹ ● 8 ՀՈՒՆԻՍԻ 2013Թ ● № 15 (288)

# Եկեղեցին երկրորդ կյանք ստացավ

**ՍՐԲԱՎԱՅՐԵՐ**



Վերականգնվել է Քաջարան գյուղի 17-րդ դարի Սբ Հակովբ եկեղեցին, ավելի ստույգ՝ այդ մասին հայտնեց ծննդով այդ գյուղից, Քաջարան քաղաքի համալիր մանկապատանեկան մարզադպրոցի տնօրեն Մերուժան Աբայանը: Ահա ինչպես ներկայացրեց մեր զրուցակիցը գյուղի հավատի տաճարը վերականգնելու նախապատմությունը. **«2010թ. ձմռանը համագյուղացի տղաներով եկեղեցի մտանք, եւ վիճակը ծանր տպավորություն թողեց: Կառույցը կիսաքանդ էր, եւ եթե այդպես շարունակվեր, տխուր ճակատագիր էր սպասվում նրան: Եկանք այն համոզման, որ եկեղեցին շուտափույթ պիտի վերակառուցվի, բայց չգիտեինք, որ պետության թույլտվությունը պիտի լինի: Սեփական նախաձեռնությամբ սկսեցինք նորոգել: Օրերից մի օր հուշարձանների պահպանության ընկերությունից եկան, թե՝ էս ի՞նչ եք անում: Մենք էլ թե՝ մեր գյուղի եկեղեցին ենք նորոգում: Նրանք էլ բացատրեցին, որ չափագրումներ պիտի արվեն, եկեղեցու վերականգնման նախագիծը պիտի ստեղծվի, որը պիտի քննարկվի մշակույթի նախարարության գիտամեթոդական խորհրդում եւ հաստատվի ու վավերացվի պատմության եւ մշակույթի հուշարձանների պահպանության գործակալությունում: Հասկացանք, որ պատմամշակութային հուշարձանների վերականգնման գործում ինքնագործունեությունն աններելի զբաղմունք է: Այդ ամենն արվեց, որ տեւեց մոտ վեց ամիս: Երբ նախագիծն արդեն կար, համագյուղացիների շրջանում հանգանակություն կազմակերպեցինք, որոշակի գումար հավաքելուց հետո սկսեցինք վերականգնման աշխատանքները: Եկեղեցու վերականգնման համար նախնական շրջանում գումար է հատկացրել «Բարգավաճ Հայաստան» կուսակցության նախագահ Գագիկ Ծառուկյանը»:**

Միանավ բազիլիկ եկեղեցու տիպին պատկանող Սբ Հակովբ եկեղեցու վերականգնմանը նախորդեցին պատմաարխիվային նյութերի ուսումնասիրություններ, հնագիտական եւ պեղման աշխատանքներ, ճարտարապետական չափագրումներ, սեյսմակայունության իրավիճակի ուսումնասիրության եզրակացություն, տեղանքի քարտեզագրում: Եկեղեցու վերականգնման վերաբերյալ կազմած տեղեկանքում պատմական հուշարձանների ճարտարապետների հայկական ասոցիացիայի փոխնախագահ Ստեփան Նալբանդյանը գրել է. **«Սբ Հակովբ եկեղեցին, կառուցված լինելով գետաքարերով, իր ճարտարապետական ձեւերով եզակի է հայ ուշ միջնադարյան եկեղեցաշինության մեջ: Երեւի թե միակն է մեր միջնադարյան ճարտարապետության մեջ, այդ պատճառով է, որ նրան կոչում ենք հազվագյուտ: Այն շատ հետաքրքիր է իր պահպանված կղմինդրյա ծածկույթով: Սա այն հազվագյուտ երեւույթներից է, որ հանդիպում ենք մեր միջնադարյան կառույցներում: Այլ տեղերում այն գրեթե չի պահպանվել կամ էլ պեղումների շնորհիվ ենք տեղեկացել, որ կառույցը կղմինդրածածկ է եղել»:**

Եկեղեցու նորոգման աշխատանքներն իրականացրել է «Հրակարսիմ» ՍՊ ընկերությունը (տնօրեն՝ Վարուժան Սիմոնյան, շինարար վարպետներ Պետրոս Սիմոնյան, Գարիկ Սիմոնյան): 2012-ի աշնանը հիմնականում ավարտվել էին շիննորոգման աշխատանքները, որին հետեւեցին եկեղեցու կահավորումը, նրա տարածքի բարեկարգումն ու կանաչապատումը: Եկեղեցու բակում նաեւ նստարաններ են տեղադրվել:

Մերուժան Աբայանը խնդրեց հրապարակել եկեղեցու նորոգմանն առավել նյութական օժանդակություն ցույց տված անձանց անունները. 20 մլն դրամ հատկացրել է «Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲ ընկերության գլխավոր տնօրեն Մաքսիմ Հակոբյանը, համագյուղացիներ՝ Արշավիր Մկրտչյանը՝ 600 հազար, Սամվել Փարամազյանը՝ իր ընկերների հետ միասին՝ 10 մլն դրամ, Էդգար Պողոսյանը, Մերուժան Աբայանը, Լյովա Արզումանյանը՝ 400 հազարական, Վոլոդյա Աբրահամյանը՝ 300 հազար դրամ: Եկեղեցու վերաշինմանը ծախսվել է ընդհանուր առմամբ 70 մլն դրամ, որի զգալի մասը Քաջարան գյուղացիների հանգանակությունն է: Մ.Աբայանը մեր զրույցի վերջում երախտագիտություն հայտնեց բոլոր նրանց, ովքեր աջակցել են գյուղի հոգեւոր տաճարի վերաշինմանը, այդ թվում արտերկրում ապրող համագյուղացիներին: Եղել են այլ բնույթի օժանդակություններ եւս: Մեկը՝ սրբապատկեր է նվիրել, մյուսը՝ մոմակալ կամ այլ գույք, երրորդն էլ պարզապես իր բազկի ուժով է մասնակցել չորս դարի պատմություն ունեցող կառույցի վերաշինմանը:

Առաջիկայում նախատեսվում է Սբ Հակովբ եկեղեցու վերաօծումը:

**ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ**

Սյունյաց երկիր
ՏԱՍՆՕՐՅԱ ԹԵՐԹ
Գլխավոր խմբագիր՝
ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
**Հասցե՝** Կապան, Շահումյան 20/32:
**Հեռախոս՝** (0285) 5 25 63, (091) 45 90 47, (077) 06 28 02:
**Էլ.փոստ՝** syuniacyerkir@mail.ru
**Ինտերնետ՝** www.syuniacyerkir.am
Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):
«**ԳՈՎԱԶԴ - ԾԱՆՈՒՑՈՒՄ**» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է:
® նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր:
Գրանցման վկայականը՝ 01Մ 000231: Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Ծավալը՝ 2 տպագրական մամուլ: Տպաքանակը՝ 2000, գինը՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 07.06.2013թ.:




# Հուշամատյան անմահության

**ՆՈՐ ԳԻՐՔ**

Հունիսի 8-ին հետախույզ, ինժեներ-սակրավոր Համլետ Մինասյանը կդառնար 55 տարեկան, բայց ի վերուստ նրան երկրային կյանքով ապրելու Քրիստոսի տարիք (33 տարեկան) էր սահմանվել:




Երբ Արցախյան պատերազմի թափանիվն արագացնում էր պտույտները, ինժեներասակրավորական բարձրագույն կրթություն ունեցող սպաներ Հայաստանում գրեթե չկային: Իսկ ամսեամիս սաստկացող մարտական գործողությունների պայմաններում նրանց կարիքն ավելի ու ավելի էր զգացվում: 1991-ի հունիսին կապիտան Համլետ Մինասյանը (ավարտել էր Կամենեց-Պոդոլսկի բարձրագույն ինժեներական ուսումնարանը, ստացել ինժեներ-սակրավորի մասնագիտություն) ներկայացավ մեկ ամիս առաջ ստեղծված պաշտպանության կոմիտե, ստանձնեց հետախուզության բաժնի ավագ մասնագետի պաշտոնը: Նա ուսումնարանում ստացած իր գիտելիքներով ձեռնամուխ եղավ ինքնապաշտպանական ջոկատների մարտիկներին սովորեցնել ականների հայտնաբերման ու վնասազերծման, ինչպես նաեւ ականապատման գործը: Սակրավորը կյանքում մի անգամ է սխալվում, բայց Համլետն այնքան լավ էր տիրապետում մասնագիտությանը, որ գործունեության ընթացքում ոչ մի զոհ չտվեց:

1991-ի ձմեռնամուտին Համլետ Մինասյանը Հայաստանի հյուսիսարեւելյան սահմաններում էր, երբ Շահումյանի շրջանում իրավիճակը կտրուկ սրվեց: Դեկտեմբերի 6-ին գործուղվում է հատուկ շրջան, Շահումյան՝ այդտեղի կամավորական ջոկատների հետ կատարելու կարեւոր առաջադրանքներ: Թեեւ ականազերծման ու ականապատման աշխատանքները կատարել էր (դեկտեմբերի 10-ին էր), վճռեց անձամբ մասնակցել սպասվող մարտին՝ ոչնչացնելու շրջանի համար սպառնալիք ներկայացնող ադրբեջանական հենակետը՝ տեղադրված Թոդան գյուղում: Մարտի ավարտական փուլում Համլետ Մինասյանը մահացու վիրավորվում է: Մարտերի դադարի պահերին Համլետ Մինասյանն իր խոհերը թղթին էր հանձնում: Մահվանից մի քանի օր առաջ Թոդանի դիրքերում գրեց իր վերջին բանաստեղծությունը.

*Ախ, եթե ընկնեմ հանուն Արցախի,*
*Շաղ չպաք շիրմիս ծաղիկներ ու լաց,*
*Տղերք, ջնջեցեք թշնամուն վայրի,*
*Որ հայոց հողում ես ննջեմ խաղաղ:*

Նահատակ ազատամարտիկի 55-րդ տարեդարձին է նվիրված «Համլետ Մինասյան. սակրավոր Համո» գիրք- հուշամատյանը, որ ընթերցողի սեղանին դրվեց վերջերս: Այն բացվում է զինվորականի հոր՝ Լալազար Մինասյանի «Իմ օջախի մինուճարը» խոսքով, որտեղ նա գրում է, թե իր կյանքի «խոր աշնանը» մտահղացում ծնվեց, քանի դեռ կենդանի է, մարտական ընկերների հետ հրատարակել մի գիրք- հավաքածու: Դա լույս ընծայվեց Համլետ Մինասյանի որդու՝ «Օնլայն Տրեյդ ինտերնետ» ընկերության (Մոսկվա) կառավարիչ Արսեն Մինասյանի հովանավորությամբ: Գիրքը հիմնականում բովանդակում է 1991-2012 թվականներին պարբերական մամուլում հրատարակված հոդվածները եւ մարտական ընկերների հիշողությունները, «Համլետ Մինասյանի կյանքը լուսանկարներում» շարքը եւ բանաստեղծություններ:

Հանրապետության զինված ուժերի հետախուզության նախկին պետ Իվան Ղուկասովը, բնութագրելով Համլետին, գրում է. **«Բարի անձնավորություն էր, եւ ամեն անգամ նրա մասին խոսելիս շուրջս բարությամբ է լցվում ամեն ինչ, եւ ցանկանում եմ, որ բոլոր ճանաչողների մեջ այդպես լինի: Եւ իրոք այդպես է: Այդպես են նրան հիշում հետը շփված բարձրաստիճան զինվորականները»:** Իսկ Արցախի հերոս, գեներալ-մայոր Արկադի Տեր- Թադեւոսյանը նկատում է, որ Համլետն ընտրել էր զինվորական բարդ մասնագիտություն եւ չէր սխալվել, քանի որ այդ մասնագիտությունը մեծ հաջողություն բերեց մեր նորաստեղծ բանակին: Նրա զինվորական ծառայությունը խորհրդային բանակում անցել էր հարավից մինչեւ Հեռավոր արեւելք, որտեղ էլ ձեւավորվել էր որպես արհեստավարժ սպա:

Ուշագրավ մի դրվագ էլ ներկայացնում է գեներալ- գնդապետ Գուրգեն Դալիբալթայանը. **«Ես շատ էի վստահում Համլետին, երեւի բոլորից ավելի, որովհետեւ միշտ լիովին արդարացրել է իմ սպասելիքները: Միայն Նյուվադիի գրավման օրինակը, որի նախապատրաստական աշխատանքները կատարել է ինքը (հետախուզություն, քարտեզագրում, ուժերի բաշխում, հրետակոծություն եւ այլն) հերիք էր պատկերացում կազմելու նրա անսպառ երեւակայության եւ զինվորական գործի տաղանդով օժտված լինելու մասին: Ուստի խիստ հրաման տվեցի՝ չմասնակցել ռազմական գործողություններին: Հրամայեցի, բայց ինքս էլ գիտեի, որ հրամանին նա չի սիրում ենթարկվել: Նա սիրում էր լինել առաջին գծում»:**

Եւ այսպես հոդվածներ, հուշեր, կարծիքներ, որոնցով ամբողջանում է Շահումյանի շրջանում նահատակված հետախույզ, սակրավոր, կադրային սպա Համլետ Մինասյանի կերպարը:

**ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ**

Հ.Գ. Մայիսի 28-ին՝ Հայաստանի առաջին հանրապետության հիմնադրման օրը, Համլետ Մինասյանի՝ Հարժիսի միջնակարգ դպրոցի բակում 1997-ի սեպտեմբերի 1-ին կանգնեցված հուշարձանի մոտ բացվեց հուշաղբյուր, որն ավելի ամբողջացրեց հուշարձանի շրջակայքը: Հիշեցնենք՝ Հարժիսի միջնակարգ դպրոցը Համլետ Մինասյանի անունը կրում է 1992թ. մայիսի 23-ից: Անվանակոչության նախաձեռնողը Սպարապետ Վազգեն Սարգսյանն էր: